



«ԱՐՅԱՆ»
ԳԻՏԱՆԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ



ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՎԱՐԳ
ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻ
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱՆԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԿ



ՄԵԴԻԱ
ԱՍՈՑԻԱՅԻՆ



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱՆ



SCIENTIFIC
ARTSAKH

НАУЧНЫЙ
АРЦАХ

№ 4(7), 2020

Հիմնադիր – Founder – Учредитель:
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)
www.y-su.am

Հրատարակիչ – Publisher - Издатель:
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)
www.aegmm.org

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ

SCIENTIFIC ARTSAKH

НАУЧНЫЙ АРЦАХ

№ 4(7), 2020

«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

«Գիտական Արցախ» պարբերականը գտնվում է www.elibrary.ru կայքում:

The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).

The «Scientific Artsakh» journal is posted on www.elibrary.ru website.

Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, принятых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных

Высшим аттестационным комитетом Республики Армения (ВАК РА).

Журнал «Научный Арцах» размещен на сайте www.elibrary.ru.

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

**Ընթացիկ համարը նվիրվում է 2020թ. սեպտեմբերի 27-ին
աղբբեջանաթուրքական վարձկան հրոսակների սանձագերծած
պատերազմում Արցախի Սուրբ հողի քաջարի պաշտպաններին:**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Նախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեհմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Անդամներ՝

Լենա ԱՄՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դավիթ ԲԱԲԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

Վահրամ ԲԱԼԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Վլադիսլավ ԳՐՈՒԶԴԵՎ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)

Գևորգ ԴԱԻԵԼՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արման ԵՐԻՎԱՐՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալֆրեդ դե ՉԱՅԱՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Ժնև, Շվեյցարիա**)

Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մարեկ ԺԵՅՄՈ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլշտին, Լեհաստան**)

Նատալյա ԿՈՎԿԵԼ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Միսսկ, Բելառուս**)

Վալենտինա ԼԱՊԵՎԱ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

Օտտո ԼՈՒԽՏԵՐՅԱՆՆՍ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

Ռուզաննա ՀԱԿՈԲՅԱՆ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Իրինա ՀԱՅՈՒԿ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Մուշեղ ՀՈՎՍԵԹՅԱՆ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գագիկ ՂԱԶԻՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Էդիկ ՄԻՆԱՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մաքսիմ ՎԱՍԿՈՎ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

Գարիկ ԶԵՌՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Տիգրան ԶՈՂԱՐՅԱՆ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գիտական Արցախ, № 4(7), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 280 էջ:

**«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 4-րդ (7-րդ) համարի տպագրության
աջակցել է «Մեդիա ասոցիացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:**

The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal

*The current issue is dedicated to the brave defenders
of the Holy land of Artsakh in the war unleashed by
azerbaijani-turkish mercenaries on September 27, 2020.*

EDITORIAL COUNCIL

Chairman: Aram SIMONYAN, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member,
Doctor of History, Professor

Editor-in-Chief: Avetik HARUTYUNYAN, Ph.D in Law, Associate Professor

Deputy Editor-in-Chief: Tehmina MARUTYAN, Ph.D in Philology, Associate Professor

Members:

Lena ASRYAN, Doctor of History (Tarragona, Spain)
Artsrun AVAGYAN, Doctor of Philology, Professor
Hrant AVANESYAN, Doctor of Psychology, Professor
David BABAYAN, Doctor of History, Associate Professor
Vahram BALAYAN, Doctor of History, Professor
Gevorg DANIELYAN, Doctor of Law, Professor
Khachik GALSTYAN, Doctor of Political Sciences, Professor
Gagik GHAZINYAN, Academician of NAS RA, Doctor of Law, Professor
Vladislav GRUZDEV, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)
Julieta GYULAMIRYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Ruzanna HAKOBYAN, Doctor of Law, Associate Professor
Nazik HARUTYUNYAN, Doctor of Pedagogical Sciences, Professor
Irina HAYUK, Ph.D in Philosophy, Associate Professor (Lviv, Ukraine)
Mushegh HOVSEPYAN, Doctor of Philology, Professor
Garik KERYAN, Doctor of Political Sciences, Professor
Tigran KOCHARYAN, Doctor of Political Sciences, Professor
Natalia KOVKEL, Ph.D in Law, Associate Professor (Minsk, Belarus)
Valentina LAPAEVA, Doctor of Law, Professor (Moscow, Russia)
Otto LUCHTERHANDT, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)
Ashot MARKOSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Edik MINASYAN, Doctor of History, Professor
Karen NERSISYAN, Ph.D in Economic Sciences, Associate Professor
Hayk SARGSYAN, Doctor of Economic Sciences, Professor
Yuri SUVARYAN, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor
Maksim VASKOV, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)
Arman YEGHIAZARYAN, Doctor of History, Professor
Seyran ZAKARYAN, Doctor of Philosophy, Professor
Alfred de ZAYAS, Doctor of Law, Professor (Geneva, Switzerland)
Marek ZEJMO, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

Scientific Artsakh, № 4(7), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 280 pages.

The publication of the 4th (7th) 2020 «Scientific Artsakh» journal was supported by «Media Association» LLC.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

*Текущий номер посвящен отважным защитникам
Святой земли Арцаха в войне, развязанной азербайджано-
турецкими наемниками 27 сентября 2020 года.*

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Председатель: Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

Главный редактор: Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

Заместитель главного редактора: Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, профессор
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, профессор
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)
Альфред де ЗАЙАС, доктор юридических наук, профессор (Женева, Швейцария)
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

Научный Арцах, № 4(7), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 280 страниц.

Публикация 4(7) номера 2020 года журнала «Научный Арцах» была осуществлена при содействии ООО «Медиа ассоциация».

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ. Արցախի փրկության ու վերակերտման հրամայականով.....9
EDITORIAL. For the Sake of the Salvation and Revival of Artsakh.....11
РЕДАКЦИОННАЯ СТАТЬЯ. Во имя спасения и возрождения Арцаха.....13

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ

Գայանե Հովհաննիսյան. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդագրական պատկերը 1920-ական թթ. սկզբներին..... 16
Gayane Hovhannisyanyan. Demographic Picture of the Nagorno-Karabakh Autonomous Region in the Early 1920S

Гаяне Оганнисян. Демографическая картина Нагорно-Карабахской Автономной Области в начале 1920-х гг.

Վահե Սարգսյան. Չավախքի հիմնահարցը վրաց հասարակական-քաղաքական մտքի ընկալմամբ (ըստ 1999-2009 թթ. վրացական տպագիր մամուլի կյուրթերի) (Մաս 2).....24
Vahe Sarkisyan. The Main Problem of Javakhk in the Perception of Georgian Socio-Political Thought (Based on Georgian Print Media in 1999-2009) (Part 2)

Ваз Саркисян. Проблема Джавахка в восприятии грузинской общественно-политической мысли (по материалам грузинских печатных изданий 1999-2009 гг.) (Часть 2)

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
POLITICAL SCIENCE, INTERNATIONAL RELATIONS
ПОЛИТОЛОГИЯ, МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ**

Առլեն Շահվերդյան. Տեղեկատվական-քարոզչական պատերազմի Էկոլոգիական չափումները Ղարաբաղյան հակամարտության համատեքստում.....45
Arlen Shahverdyan. Environmental Aspects of the Information-Propagandist War in the Context of the Karabakh Conflict

Арлен Шахвердян. Экологические аспекты информационно-пропагандистской войны в контексте Карабахского конфликта

Գոր Պետրոսյան. Պատժամիջոցների կիրառման նպատակներն ու մեխանիզմները ժամանակակից միջազգային հարաբերություններում.....52
Gor Petrosyan. The Objectives and Mechanisms of Application of the Sanctions in Contemporary International Relations

Гор Петросян. Цели и механизмы применения санкций в современных международных отношениях

Նարեկ Սուքիասյան. ՀՀ արտաքին քաղաքականության ռուսական ուղղության վրա ազդող կառուցվածքային գործոնների տեսականացման փորձ և այդ գործոնների ազդեցության Էվոլյուցիան.....61
Narek Sukiasyan. An Attempt of Theorizing the Structural Factors Influencing the Russian Direction of Armenia’s Foreign Policy and the Evolution of Those Factors

Нарек Сукиасян. Попытка теоретизирования структурных факторов, влияющих на российское направление внешней политики Армении и их эволюцию

ԶԱՎԱԽՔԻ ՀԻՄՆԱԶԱՐՑԸ

**ՎՐԱՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ
(ԸՍՏ 1999-2009 ԹԹ. ՎՐԱՑԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ՄԱՍՈՒԼԻ ՆՅՈՒԹԵՐԻ)
(ՄԱՍ 2)***

ՀՏԴ 93(479.22)

ՎԱՐՅԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱՄ պատմության ինստիտուտի սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
Vsarqsyvan83@gmail.com

Հոդվածի նպատակն է շուրջ տասնամյա ժամանակահատվածի (1999-2009 թթ.) վրաց տպագիր մամուլի նյութերի միջոցով ներկայացնել Զավախքի հիմնահարցը՝ վրաց հասարակական-քաղաքական մտքի ընկալմամբ: Հոդվածի առաջին մասի խնդիրն է եղել համակարգված կերպով ցույց տալ, մատնանշել ներքին և արտաքին բոլոր այն գործոնները, որոնք ապդել են Զավախքի հիմնահարցի վրացական ընկալումների վրա: Աշխատանքի երկրորդ (սույն) մասում ներկայացված են Զավախքի հիմնահարցի վրացական ընկալումները մատնանշող վրացական տպագիր մամուլի հիմնական հրապարակումները:

Ուսումնասիրությունն ամփոփվում է համապատասխան ելրահանգումներով:

Հետազոտության տեքստը շարադրվել է 1999-2009 թթ. վրացական տպագիր մամուլում հրապարակված, ինչպես նաև թեմային առնչվող այլևայլ նյութերը և՛ առանձնաբար, և՛ համադրմամբ ուսումնասիրելու հենքի վրա:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն ելրակացության, որ վրաց հասարակական-քաղաքական միտքը հիմնականում և գերակշիռ մասով մերժել է Զավախքի հիմնահարցի գոյությունը, բացասաբար է վերաբերվել բոլոր այն կապակերպությունների, գործիչների գոյությանն ու գործունեությանը, որոնք այս կամ այն կերպ արծարծել են Զավախքի հիմնահարցը: Ներկայիս Վրաստանի տարածքում բնակվող տեղաբնիկ ժողովուրդը հանդիսացող, միևնույն ժամանակ որպես ազգային փոքրամասնություն հանդես եկող ջավախահայության պահանջները, որոնք համապատասխանում են միջազգային իրավունքի տառին ու ոգուն, վրաց հասարակական-քաղաքական միտքը որակել է անջատողականության դրսևորում, ՀՀ-ի և ՌԴ-ի կողմից ուղղորդվող սադրանք Վրաստանի տարածքային ամբողջականության դեմ:

Հիմնաբառեր՝ Զավախքի հիմնահարց, վրաց հասարակական-քաղաքական միտք, վրաց տպագիր մամուլ, վրացական միջավայր, ընկալումներ, վերաբնակեցում, տարանցիկ ուղիներ, Ռուսաստան, Թուրքիա, Հայաստանի Հանրապետություն:

Շարունակենք ներկայացնել վրաց տպագիր մամուլի 1999-2009 թթ. ժամանակահատվածի այն կարևորագույն հրապարակումները, որոնցում արտացոլված են վրաց հասարակական-քաղաքական, քաղաքագիտական, որոշ չափով նաև

* Հոդվածը ներկայացվել է 08.07.2020թ., գրախոսվել՝ 13.07.2020թ., տպագրության ընդունվել՝ 22.12.2020թ.:

գիտական-ակադեմիական ոլորտների ներկայացուցիչների մտքերը, կարծիքներն ու տեսակետները: Նյութերը ներկայացնում ենք ըստ հրապարակումների ժամանակագրության:

«Ռեզոնանսի» թերթի հոդվածագիր Թինաթին Մոսիաշվիլին ծավալուն անդրադարձ է հրապարակել Չավախբում վրացերենի չիմացության և դրանից բխող հետևանքների վերաբերյալ: «Ինչների՞ս է պետք վրացերենը. Չավախբում Վրաստանի նախագահին էլ չի խոսում վրացերենով» վերտառությամբ հրապարակման մեջ նշվում է, որ Ախալքալաքի բնակչության 97 %-ը հայեր են, և շատերին իրոք որ պետք չէ վրացերենը: «Երկրամասում չեն հեռարձակվում Վրաստանի հեռուստահաղորդումները, չի հասնում վրացական մամուլը, իսկ, ընդհանրապես, Ախալքալաք այցելողները չեն զգում, որ իրենք գտնվում են Վրաստանում, այստեղ բացակայում են վրացերեն գրությամբ գովազդները»²⁸. այսպես ներկայացնելով իր դժգոհությունները՝ Թ. Մոսիաշվիլին հիշատակում է վրաց լեզվի ուսուցման պետական ծրագրի, այլ միջոցառումների ու քննարկումների մասին, ցիտելով նահանգային կրթության վարչությանը՝ վիճակագրական որոշ տվյալներ է ներկայացնում ուսուցչության և դպրոցների քանակի մասին և այլն: Հեղինակն այս շրջանակներում մեղադրանքներ է ներկայացնում Սամցխե-Չավախբում Վրաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչ (նահանգապետ), ազգագրագետ – հայագետ Գիզլա Բարամիձեին²⁹ և փաստում, որ վերջինիս բացարձակապես չի հուզում վրաց լեզվի ուսուցման հարցը: Նահանգապետն էլ մեղադրել է պետությանը՝ պետական լեզվի ուսուցման ծրագրի համար միջոցների խնայման մեջ: Հոդվածագիրը նաև մտահոգություն է հայտնում և մեծ հիմնախնդիր համարում այն իրողությունը, որ պատմության ու աշխարհագրության ուսուցիչների մեծամասնությունն ավարտել են ՀՀ-ի բուհերը, իսկ ֆակուլտատիվ դասաժամերի շրջանակներում դասավանդվող այդ առարկաների դասագրքերը մատակարարվում են Հայաստանի (ադրբեջանցիների պարագայում՝ Ադրբեջանի) կողմից³⁰: Հրապարակագիրն այդ տենդենցների մեջ անջատողականության վտանգ է տեսնում և հիշեցնում, որ նման կերպ շարունակվելու դեպքում Չավախբում առավել վատթար իրավիճակ կստեղծվի, քան Աբխազիայում: Բնականաբար, հոդվածագիրն ամենևին չի հիշատակում միջազգային տասնյակ հանրագրերն ու այլևայլ փաստաթղթեր, որոնցով նախատեսված են հասարակական – քաղաքական, լեզվական, կրթամշակութային հողի վրա բազմաթիվ արտոնություններ ջավախահայության՝ որպես տեղաբիկ ժողովրդի կամ ազգային փոքրամասնության համար³¹: Չավախահայության՝ Սամցխե-Չավախբի

²⁸ «ՐԵԶՈՆԱՆՍԻ» («Ռեզոնանսի») («Ռեզոնանս»), N 163, 2001.

²⁹ Վրաստանի ղեկավար Է. Շևարձևաձեի՝ 1994 թ. հուլիսի 31-ի թիվ 237 հրամանագրով ստեղծված Սամցխե-Չավախբի նահանգապետների, այդ թվում՝ հայաստաց հայացքներով ու քայլերով հայտնի Գիզլա Բարամիձեի մասին, ով եղել է Վրաստանի նախագահի առաջին լիազոր ներկայացուցիչը (նահանգապետը) Չավախբում (1994-2002 թթ.), մինչև 1998 թվականը համատեղությամբ նաև ՀՀ-ում Վրաստանի առաջին արտակարգ և լիազոր դեսպանը, հանգամանորեն տե՛ս Սարգսյան Վ., «Մեռավ թագավորը, կեցցե՛ թագավորը»: Ովքե՛ր են իրականում Սամցխե-Չավախբի «նահանգապետ» կոչված մարդիկ, *Չավախբը 1988-2008 թթ. (հոդվածների ժողովածու)*, Երևան, 2009, էջ 267-273:

³⁰ «ՐԵԶՈՆԱՆՍԻ» («Ռեզոնանսի») («Ռեզոնանս»), N 163, 2001. Պետք է փաստել, որ մեկուկես-երկու տասնամյակ անց՝ այդ «հիմնահարցը» գրեթե «լուծվել է» Վրաստանի (այդ թվում՝ Չավախբի) հայկական դպրոցներում. մոնոթեթիզացման քաղաքականության արդյունքում ծրագրերում բացառված են «Հայոց պատմություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկաները, նույնվերայ գրեթե արգելված են ՀՀ-ից Վրաստանի հայկական դպրոցներ առաքվող դասագրքերը:

³¹ Տե՛ս Չավախահայության իրավունքների ամրագրումը միջազգային փաստաթղթերում, հեղինակ-կազմող՝ Վահե Սարգսյան, *Հայոց ՅուՆԵՍԿՈՒՅԻ ղարսպասները. Չավախբ, Լոռի, հ. 3*, Երևան, 2009:

Նահանգապետ Գիզա Բարամիծեից ունեցած բազմապիսի դժգոհությունների և ոչ հայանպաստ քայլերի մասին է վկայում «Ախալի թառա» թերթի մի հրապարակումը, որում հողվածագիր-պատմաբան Գերոզի Ուծիլաուրին մեղադրում է ջավախահայ գործիչներին, 2. Ժվանիայի՝ տվյալ շրջանի թիմակիցներից Մելիք Ռախյանին և այլոց, որոնք հրապարակավ սուր քննադատության են ենթարկել նահանգապետի վարած քաղաքականությունը³²:

Չավախքի խնորին այլ տեսանկյունից է մոտենում «Դիլիս գազեթի» հողվածագիր Մ. Չաչվան՝ անդրադառնալով Էդ. Շևարդնաձեի՝ 2001 թ.-ի հոկտեմբերին Երևան կատարած այցին: Վերլուծելով տարածաշրջանային զարգացումները՝ հեղինակը փաստում է, որ ՀՀ-ին պետք է ոչ թե Կրաստանից խել Չավախքը, այլ վերջինիս միջոցով ազդել Կրաստանի վրա և թույլ չտալ Կրաստան – Թուրքիա հարաբերությունների կտրուկ խորացումներ³³: Նույն թերթի մեկ այլ հրապարակագիր Գ. Կվիտաշվիլին, անդրադառնալով ՀՀ Ազգայի ժողովի ՀՀԴ խմբակցության պատգամավոր Ա. Ռուստամյանի՝ եվրոպական կառույցներում ջավախահայության իրավունքների ոտնահարման վերաբերյալ ունեցած ելույթին, քննադատում է ՀՀ ԱԺ պատգամավորին, վերջինիս կողմից Կրաստանին ներկայացված մեղադրանքները համարում անտեղի, Ռուսաստանի թելադրանքով արված քայլ և այլն³⁴:

Հետխորհրդային շրջանում Կրաց Ուղղափառ եկեղեցու՝ Չավախքում հաստատման գործընթացի մասին խիստ ուշագրավ հարցազրույց է գետեղվել «Ռեզոնանսի» թերթի համարներից մեկում, որում ՎՈՒԵ-ի Բորժոմ – Ախալքալաք տարածաշրջանի հոգևոր առաջնորդ վերապատվելի Սերաֆիմ Եպիսկոպոսն (Չավախքում ծառայության է նշանակվել 1995 թվականից) մանրամասն ներկայացրել է առկա բոլոր դժվարությունները, որոնց հանդիպել են Չավախքի տարբեր շրջաններում հաստատվող և իրենց ազդեցությունը տարածող ՎՈՒԵ-ի ներկայացուցիչները³⁵: Եպիսկոպոսը դժգոհում է, որ վրացիները Չավախք քիչ են այցելում, հատկապես երիտասարդությունը, որն անտարբեր է, այնտեղ բացակայում են վրացական եկեղեցիները, կրթամշակութային, կրոնական միջոցառումները, պետական և այլ ծրագրերը, փոխարենը ջավախահայության հայացքն ուղղված է Երևան³⁶: Ըստ նրա՝ ՎՈՒԵ-ի գլխավոր խնդիրն է Չավախքի տարբեր շրջաններում հիմնել եկեղեցիներ, մեծացնել հոգևորականների թիվը, տարաբնույթ ծրագրերով մեծացնել այնտեղ վրաց հոգևոր-մշակութային ազդեցությունը և այլն: Վերապատվելի Սերաֆիմ Եպիսկոպոսն ուրախությամբ է փաստում, որ իրենք ՎՈՒԵ-ի ծիսակարգով մկրտում են ոչ միան վրացիներին, որոնք հատկապես Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններում չնչին թիվ էին կազմում (Ախալքալաք քաղաքում, ըստ նրա, տվյալ ժամանակահատվածում (2001 թ.) ապրել են 30 վրացի ընտանիքներ, ևս 40՝ խառնամուսնական ընտանիքներ), այլև

³² “ახალი თაობა” («Ախալի թառա» («Նոր սերունդ»)), N 219, 2001.

³³ “დღის გაზეთი” («Դիլիս գազեթի» («Առավոտյան թերթ»)), N 235, 2001.

³⁴ “დღის გაზეთი” («Դիլիս գազեթի» («Առավոտյան թերթ»)), N 268, 2001.

³⁵ “რეზონანსი” («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 159, 2001. Կրացի Եպիսկոպոսի հայտնած տեղեկություններից պարզվում է, որ ՎՈՒԵ-ի՝ Ախալքալաքում գտնվող ներկայիս կրոնական կենտրոնի շենքը, որը խորհրդային շրջանում պատկանում էր ՎԽՍՀ Կոմկուսի Ախալքալաքի շրջկոմին, այնուհետև ծառայում էր որպես վրացական մանկամսուր, իսկ 1995 թվականից այնտեղ հաճախող վրացի երեխաների բացակայության պատճառով հանվել էր վաճառքի, ՎՈՒԵ-ի Ախալքալաք-Բորժոմի Եպիսկոպոսությանն է տրամադրվել վիրահայ հասարակական-քաղաքական գործիչ Հենրիխի (Գենա Մուրադյանի) շնորհիվ:

³⁶ Կրացի Եպիսկոպոսը դժգոհությամբ է փաստում, որ հայոց պատմության դասագրքերի մեջ և այլևայլ հրատարակություններում Չավախքը հայկական հիմնավորց հող է հիշատակվում, ավելին, այդ տեսակետին են նաև ջավախահայերը, ինչն էլ խիստ անհանգստացնող է վրացական կողմի համար:

բազմաթիվ հայ ընտանիքների: Այս փաստի մասին է խոսում նաև ՎՈՒԵ-ի կողմից Ջավախքի այնպիսի բնակավայրերում եկեղեցիների հիմնումը, որտեղ բացակայում է վրացի ազգաբնակչությունը: Եպիսկոպոս Սերաֆիմը այդպիսի օրինակների թվում հիշատակում է Փարվանա լճի ափին գտնվող հանրահայտ Փոկա գյուղը:

Ախալքալաքում ռուսական ռազմաբազայի գոյության, վերջինիս դուրսբերման և ջավախահայության՝ այս հարցում ցուցաբերած դիրքորոշումները ևս լայնորեն դարձել են վրաց հասարակական-քաղաքական մտքի քննարկման առարկա: Վրաստանի «Ավանդականների միության» ղեկավար Ակակի Ասաթիանին, օրինակ, քննարկել է խնդիրը և այն կարծիքը հայտնել, որ Սամցխե-Ջավախքի հայ բնակչությունը կտրուկ կերպով դեմ է արտահատվում ռուսական ռազմաբազաների դուրսբերմանը: Եվ չնայած Ռուսաստանը կձգտի ջավախահայության միջոցով ապակայունացնել տարածաշրջանը, որպեսզի ռազմակայանը շարունակի թողնել այնտեղ, սակայն Հայաստանը չի գնա իրավիճակի սրման ճանապարհով, քանի որ նրա համար կփակվեն կենսական ճանապարհները³⁷: Նույն խնդիրն է քննարկվել «Նոր 7 օր» թերթի էջերում, որտեղ նմանատիպ տեսակետներ են հայտնել քաղաքագետներ Չվիադ Չխաիձեն և Գիորգի Խելաշվիլին³⁸: Քաղաքագետներն այն թյուր կարծիքն են հայտնել, որ ջավախահայության շրջանում գործող ազգային-քաղաքական կազմակերպությունները, հատկապես «Ջավախք» ժողովրդական Շարժումը, «Վիրք» չգրանցված կուսակցությունը, «Փարվանա» կազմակերպությունը մեծ վտանգ են ներկայացնում Վրաստանի համար և ծառայում են օտար (ռուսական) ուժերին: Իրենց հրապարակային մտահոգությունն են հայտնել և ջավախահայությանը որպես վտանգ են դիտարկել Քուլայիսի պետհամալսարանի դոցենտներ Գվի Գուրեշիձեն, Դավիթ Նեմսիձվերիձեն և ինժեներ-մանկավարժ Ռոման Չուչուռնաշվիլին: «Հայկական անջատողականության» արհեստածին խնդիրը բարձրաձայնելով՝ վերջիններս առաջարկել են «վիճակը փրկելու համար» Վրաստանի մայրաքաղաքը շուտափույթ կերպով տեղափոխել Ախալքալաք³⁹: Գրեթե նույն միտքն է զարգացնում մեկ այլ վերլուծաբան՝ «Մթավառի գագեթի» պարբերականի հոդվածագիր Իրակլի Ջոխաձեն, որ «Դանդաղ գործող ական՝ 5-րդ շարայուն» վերտառությամբ հոդվածում ծավալուն անդրադարձ է կատարում Ջավախքում ստեղծված իրարդությանը, այնտեղ գործող կազմակերպություններին, հայության շրջանում առկա տրամադրություններին և այլն: Բավականին մանրակրկիտ կերպով անդրադառնալով Վրաստանում և, մասնավորապես, Ջավախքում հայերի թվի տոկոսային հարաբերակցությանը, տարբեր տարիների ժողովրդագրական ցուցանիշներին՝ հոդվածագիրը ջավախահայության՝ հանուն սեփական իրավունքների պայքարը որակում է Ռուսաստանի կողմից աջակցություն ստացող անջատողական կամ զավթողական ձգտումներ⁴⁰: Շարունակելով զարգացնել «ջավախքյան անջատողականության» թեման և խոսելով ջավախքյան կազմակերպությունների («Ջավախք», «Փարվանա») մասին՝ Ի. Ջոխաձեն տարօրինակ կերպով մեղադրում է վերջիններին՝ իրենց ծրագրերում հայկական մշակութային հուշարձանների պահպանության, տարածաշրջանի զարգացման և դպրոցներում հայոց պատմության ուսումնասիրման պահանջների մասին դրույթներ ունենալու համար: «Հայ անջատողականների (ջավախահայության՝ Վ.Ս.) ամբոխավար գործողությունների» մասին հիշատակմամբ «Չվենի էրթորա» շաբաթաթերթի ծավալուն առաջնորդող անդրադարձել է թուրքական բարձրագույն ռազմական ղեկավարության՝ 2002 թ.-ի մարտին Վրաստան կատարած այցին և, ընդհանրապես, ռազմական ոլորտում

³⁷ «Չրջես քյորթեր» («Պոես կուրիեր»), N 129, 2001.

³⁸ «Նճալո 7 ճճջ» («Ախալի 7 դրե» («Նոր 7 օր»)), N 25, 2001.

³⁹ «Նճաջալ-ճանճալո» («Ասավալ-դասավալի»), N 27, 2001.

⁴⁰ «Մտաջարի ցաճջոտ» («Մթավառի գագեթի» («Գլխավոր թերթ»)), N 4, 2002.

Թուրքիայի հարաճուն ներկայությանն ու ազդեցության խորացմանը: Հողվածագիրը, ներկայացնելով Վրաստանում թուրքական ռազմական ներկայության և ռազմական ուղորտում վրաց-թուրքական համագործակցության վերաբերյալ մի շարք փաստական ու վիճակագրական տվյալներ⁴¹, հանգամանորեն անդրադառնում է թուրքական հրապարակային ու թաքնված նկրտումներին, ըստ որոնց՝ ռուսական ազդեցության լծակներն արագորեն իր ձեռքը վերցնող այդ երկիրը ցանկանում է Չավախբում Վրաստան-ՀՀ սահմանի երկայնքով, տեղակայել իր զորամիավորումները. դրանք, թերթի աղբյուրների համաձայն, հնարավոր է տեղակայվեն նաև Ախալցխայի հարակից Վալե ավանում, Ծավկայի մերձակայքում և Քուռ գետի հովտի երկայքով՝ թուրք-ադրբեջանական տարանցիկ գոտիների (Նավթամուղ, գազամուղ, երկաթուղի) վերահսկման նպատակով: Հրապարակման մեջ տեղ է գտել չափազանց հետաքրքրական մի փաստ ևս, ըստ որի՝ Թուրքիան կիսապաշտոնական կերպով հայտարարել է, որ պատրաստ է Չավախբի հայ բնակչությանը սեփական ֆինանսական միջոցներով տեղափոխել ՌԴ Կրասնոդարի և Ստավրոպոլի երկրամասեր և նրանց բնակատեղեցում վերաբնակեցնել թուրք-մեսխեթցիներին⁴²: Փաստե՞ք նաև, որ թերթը թուրքական այսպիսի նկրտումները համարում է չափազանց վտանգավոր ինչպես Վրաստանի, այնպես էլ տարածաշրջանի համար:

Հայ-վրացական միջխորհրդարանական հանձնաժողովի 4-րդ նիստում (2002 թ. հունիս, Երևան)⁴³ ՀՀ խորհրդարանականների կողմից ջավախահայության սոցիալ-տնտեսական, կրթական և այլ հիմնահարցերի վերհանման փաստը խիստ քննադատության է ենթարկում «24 սաաթի» թերթը: Հանձնաժողովի քարտուղար Դավիթ Լացուզբայայի՝ հրապարակման մեջ տեղ գտած մեկնաբանություններից երևում է, որ հայ պատվիրակության կողմից Չավախբի հարցը նիստի օրակարգ մտցնելու փաստը հանկարծակի է բերել վրացական պատվիրակությանը և առաջացրել մեծ դժգոհություն: Հավելե՞ք, որ հայկական կողմը (փոխխոսնակ Տիգրան Թորոսյանի գլխավորությամբ) առաջարկել է քննարկել ՀՀ մասնակցությունը Սամցխե-Չավախբի սոցիալ-տնտեսական վերականգնման ծրագրերում: Պատվիրակության անդամ մեկ այլ խորհրդարանական Հենրիկ Գրիգորյանն էլ առաջ է քաշել Չավախբի դպրոցներում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված դասագրքերով ուսուցանելու հարցը, ինչը ևս հատուկ ուշադրության չի արժանացել վրացական պատվիրակության կողմից: Դիպվածը փաստում է, որ պաշտոնական Վրաստանը Եդ. Շևարճնաձեի օրոք ևս կասկածանքով է վերաբերվել Չավախբի հիմնահարցերի լուծման վերաբերյալ ՀՀ պաշտոնական առաջարկներին ու քննարկումներին, իսկ հասարակական-քաղաքական մտքի քննարկումներում այդ փաստն ընդունվել է սվիններով՝ տեղիք տալով այդ առաջարկներում ինչ-ինչ «դավադրությունների» կամ

⁴¹ “Իջցնո ցճոտծն” («Չվենի Էռթոբա» («Մեր միասնությունը»)), N 6, 2002. Ըստ հրապարակման՝ Թուրքիան վերջին 5 տարվա ընթացքում Վրաստանին է տրամադրել 35 միլիոն դոլարի ռազմական հանդերձանք և այլ պարագաներ: Անկարան իր միջոցներով արդիականացրել է Մառնեուլի ռազմական օդանավակայանը, որի կառավարումը, փաստորեն, արդեն Թուրքիայի ձեռքում է, վրացական խաղաղարար գումարտակը Կոստվոյում իր առաքելությունն իրագործում է թուրքական ռազմական խմբավորումների կազմում և այլն:

⁴² “Իջցնո ցճոտծն” («Չվենի Էռթոբա» («Մեր միասնությունը»)), N 6, 2002. Թերթի խմբագրությունը «Չավախբի» փոխարեն օգտագործել է «Չավախբ» հայերեն անվանաձևը, այդուհանդերձ, այն վերցնելով չակետների մեջ:

⁴³ “24 ՆՏՏՈ” («24 սաաթի» («24 ժամ»)), N 24, 2002. Հայ-վրացական միջխորհրդարանական հանձնաժողովի հայկական և վրացական պատվիրակությունները գլխավորել են երկու երկրների խորհրդարանների փոխխոսնակներ Տիգրան Թորոսյանը և Վախթանգ Կոլբայանը: Հանձնաժողովի նախորդ (3-րդ) նիստը տեղի էր ունեցել դրանից 3 տարի առաջ՝ 1999 թ. մարտին:

«թաքնված ականների» որոնման: Գրեթե նմանատիպ մոտեցումների է արժանացել նաև 1999 թ. հիմնադրված և իրավական գրանցում չստացած «Վիրք» կուսակցության գոյությունն ու վերջինիս ղեկավար Դավիթ Ռստայանի՝ հասարակական-քաղաքական ոլորտում ծավալած գործունեությունը «Մթավարի գազերի» թերթի ծավալուն հրապարակման մեջ⁴⁴: Թերթը հրապարակել է նաև անվտանգության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Նիկա Լալիաշվիլու մեկնաբանությունը, որում վերջինս, թեև խուսափել է ուղղակի դիրքորոշում հայտնել «Վիրքի» գործունեության վերաբերյալ, այդուհանդերձ հայտարարել է, որ պետությունը պետք է ամեն ինչ անի, որպեսզի վերջ դնի քրեական, անջատողական ու ահաբեկչական շարժումների ուժեղացմանը: «Վիրքի» և նրա ղեկավար Դավիթ Ռստայանի մասին խոսելիս գույներն ավելի է խտացնում «Ախալի եռա» թերթը՝ նրա գործունեությունը համարելով արկածախնդրություն: Հոդվածագիր – պատմաբան Լուկա Աբուսերիձեն Դ. Ռստայանի գործունեությունը համեմատում է 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների «արկածախնդրությունների» հետ, ինչին ի պատասխան՝ ըստ նրա՝ Օսմանյան կայսրությունը 1915 թ.-ին իրագործեց ցեղասպանություն, և կշեռքի նժարին դրվեց փոթորաթիվ հայ ազգի լինելիության հարցը⁴⁵: Հոդվածում ոչ միայն բացակայում է հարևան – բարեկամ հայ ժողովրդի և նրա պատմության ողբերգական էջերի հանդեպ հարգանքը, այլև այն ծայրից-ծայր լցված է թույնով ու սպառնալիքներով, տեղ-տեղ՝ վիրավորական ու հեզնական որակումներով, ինչը խոսում է վրացական միջավայրում ջավախահայության և այնտեղ գործող հասարակական-քաղաքական ուժերի հանդեպ ծայրահղ անհանդուրժող տրամադրությունների, կասկածանքի առկայության և փոխվստահության բացակայության մասին: Այդ ցավալի իրողության արտացոլանքն է «Ասավալ-դասավալի» թերթի՝ Ախալքալաքի դատավոր Սուսաննա Մանուկյանի մասին հրապարակած վերլուծականը: Սուսաննա Մանուկյանն իր հարցազրույցերից մեկում դժգոհել է դատավորների որակավորման քննությունները վրացերենով հանձնելու փաստի առիթով: «Բարի եղեք նկատի ունենալ, որ Ջավախքը Վրաստանի հայալեզու տարածաշրջան է»:

Ս. Մանուկյանի՝ Վրաստանի իշխանություններին ուղղված այս հայտարարությունը, բնականաբար, հիշեցնում էր այն մասին, որ պետությունը պարտավոր էր հաշվի նստել ջավախահայության՝ միջազգային օրենսդրությամբ նախատեսված լեզվական իրավունքների հետ և հայերենին՝ որպես տեղաշրջանային լեզվի, շնորհիվ իրավական կարգավիճակ⁴⁶: Ինչպես նախորդ դեպքում «Ասավալ-դասավալիի» հոդվածագիրը ևս քաղաքակիրթ քննարկման փոխարեն սպառնալիքներ է տեղում Ախալքալաքի հայազգի դատավոր Սուսաննա Մանուկյանի հասցեին և Վրաստանի Գերագույն դատարանի ղեկավարից պահանջում վտարել նրան դատական համակարգից⁴⁷:

⁴⁴ «Մտազարի Գաջոտի» («Մթավարի գազերի» («Գլխավոր թերթ»)), N 124, 2003.

⁴⁵ «Նաջլո Երա» («Ախալի եռա» («Նոր դարաշրջան»)), N 41, 2003.

⁴⁶ Ս. Մանուկյանն անուղղակիորեն մատնանշել է Եվրոպայի խորհրդի կողմից 1995 թ. ընդունված Ազգային փոքրամասնությունների շրջանակային կոնվենցիան (Վրաստանն այն վավերացրել է բավականին ուշացումով՝ 2005 թ. դեկտեմբերի 22-ին և ուժի մեջ մտցրել 2006 թ. ապրիլի 1-ին), 1992 թ. ընդունված ԵՄ Տեղաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան (Վրաստանը, ցավոք, մինչ օրս չի վավերացրել այն), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ)՝ ազգային փոքրամասնություններին վերաբերող Հաագայի (1996 թ.), Օսլոյի (1998 թ.), Լոնդոնի (1999 թ.) հանձնարարականները և այլ միջազգային փաստաթղթեր: Առավել հանգամանորեն տես **Ջավախահայության իրավունքների ամրագրումը միջազգային փաստաթղթերում**, հեղինակ-կազմող՝ Վահե Սարգսյան, *Հայոց Հյուսիսային դարպասները. Չավախք, Լոռի, հ. 3, Երևան, 2009*:

⁴⁷ «Նաջալ-ճանաջալո» («Ասավալ-դասավալի» («Վերելք-վայրէջք»)), N 30, 2003.

Կրկին «Ձավախքում առկա անջատողականության» խնդիրն է շրջափել պատմաբան-հրապարակագիր Բորիս Բոխուան՝ «Ռեզոնանսի» թերթի էջերում պատմական ընդարձակ էքսկուրս կատարելով և ներկայացնելով 1918 թ.-ի դեկտեմբերի 2-րդ կեսին տեղի ունեցած վրաց-հայկական պատերազմին, Վրաստանի խորհրդայնացմանն ու վիճելի տարածքների ճակատագրին առնչվող մի շարք մանրամասներ: Շարադրանքում միակողմանի լույսի ներքո քննելով իրերի ընթացքը՝ հեղինակն անխնա քննադատության է ենթարկում Հայ Յեղափոխական Դաշնակցությանը (ՀԶԴ)՝ Վրաստանի դեմ պատերազմ սկսելու, տարածքներ զավթելու, իսկ արդի փուլում էլ Ձավախքի Ծավկայի, Նինոծմինդայի և Ախալքալաքի շրջանների հայ ազգաբնակչության շրջանում այն ազդեցություն ունենալու, նրանցից ոմանց Արցախյան պատերազմին մասնակցության տանելու և այլնի համար⁴⁸: Վրացի այլ հեղինակների կարծրացած դիրքորոշումների օրինակով՝ Բ. Բոխուան ևս Ձավախքում տեղի ունեցող այս կամ այն գործընթացը կամ իրադարձությունը քննում է ոչ թե համակողմանիորեն, անաչառ լույսի ներքո, այլ հետևելով ավանդույթին՝ այդ ամենի հետևում անպայմանորեն տեսնում է մութ, դավադիր ուժեր, որոնց շարքում, բնականաբար, առաջնահերթորեն հիշատակվում է ՀԶԴ-ն: Այսպես, հեղինակը, առանց այդ առթիվ փաստեր ներկայացնելու, ՀԶԴ-ին է վերագրում 1998 թ.-ի զորավարժությունների (ենթադրվում է՝ հետագայում նաև այնտեղ մշտական տեղակայման) նպատակով վրացական ռազմական շարասյան մուտքը Ախալքալաքի շրջան՝ արգելելու գործողությունը: Այնինչ ռազմական շարասյան մուտքի արգելքը կազմակերպել են մի խումբ ջավախահայ ղեկավար գործիչներ՝ բերելով իրենց գործողության համար իրավական հստակ հիմնավորումներ⁴⁹: Ձավախահայ գործիչների կողմից վրացական ռազմական շարասյան մուտքը Ախալքալաքի շրջան արգելելու փաստն իր հողվածներում խստորեն դատապարտել է նաև պատմաբան-հայագետ Բոնդո Արվելաձեն⁵⁰:

2004 թ.-ի հուլիսին հայության և հայ-վրացական հարաբերությունների մասին իրարից անկախ երկու ծավալուն հոդվածներ են հրապարակվում «Պրես-պրեմիերի»⁵¹ և «Զորջիան թայմս»⁵² թերթերում: Առաջինում Վրաստանի Ծղալտուրո բաղաքի բնակիչ, հավանաբար պատմաբան Ինդիկո Փխակաձեն բավական խառնիճաղանջ կերպով, առանց ժամանակագրության պահպանման ներկայացնում է պատմական մի շարք անցքեր ու իրադարձություններ՝ հայությանը մեղադրելով «վրացական տարածքների պարբերաբար զավթման» և «բնակավայրերի յուրացման» մեջ: Մեկ թափանցելով միջևադար, մեկ՝ հին դարեր, այնուհետև միանգամից գալով 20-21-րդ դարեր՝ հեղինակը նշում է, թե իբր Մեսխեթ (Սամցխե)-Ձավախքում հայերն այսօր էլ ատելությամբ են լցված վրացիների նկատմամբ և չեն ընդունում վրացիների առկայությունը վրացական այդ հիմնավորց հողում՝ Ռուսթավելու ծննդավայրում⁵³: Մեղադրելով Էդ. Շևարձնաձենին Վրաստանի դեմ ուղղված քայլերի, Աբխազիան ու Հարավային Օսեթիան դավաճանաբար օտարելու մեջ՝ Ի. Փխակաձեն այն միտքն է զարգացնում, որ իշխանությունների թույլ տված սխալների պատճառով մեր օրերում ինչպես հայերը, այնպես էլ ադրբեջանցիները Վրաստանի կազմում ինքնավար հանրապետություն

⁴⁸ «Տրեֆոնանս» («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 95, 2004.

⁴⁹ Հիշյալ դեպքի մասին առավել հանգամանորեն տե՛ս **Սարգսյան Վ.**, 1998 թ. օգոստոսի 12: Ձավախքի վերջին համարձակ քայլը, *Հայոց հյուսիսային դարպասները. Ձավախք, Լոռի (հողվածների ժողովածու), Երևան, 2009, էջ 32-40:*

⁵⁰ «Զալոթա» («Գալոթա» - «Դայլալ, երգեցողություն»), N 4, 2005.

⁵¹ «Յրես-Յրեմոյր» («Պրես-պրեմիերի»), N 39, 2004.

⁵² «Ջորջիան Թայմս» («Զորջիան թայմս»), N 27, 2004.

⁵³ «Յրես-Յրեմոյր» («Պրես-պրեմիերի»), N 39, 2004. Ըստ որոշ վկայությունների՝ մեծանուն պոետ Շոթա Ռուսթավելին ծնվել է Ձավախքում՝ ներկայիս Ասպինձայի շրջանի Ռուսթավելի գյուղում:

ստեղծելու պահանջներ են ներկայացնում: Հայրությանը դարձյալ ոչ բարյացակամ վերաբերմունքի է արժանացնում «Ձորջիան թայմսի» հողվածագիրը: Անդրադառնալով Ջավախքի Չունչխա, Պրտենա վրացաբնակ և Խոսպիա մասամբ վրացաբնակ (Նախկինում հունաբնակ) գյուղերի սոցիալ-տնտեսական, կրթական ու հոգևոր կյանքին՝ թերթը մեղադրանքներ է հասցեագրում ջավախահայությանը՝ նշված գյուղերի վրացիների հանդեպ իբր անհանդուրժող կեցվածք ունենալու համար: Փաստենք, որ սույն հեղինակի շարադրանքը ևս խիստ կողմնակալ է, զգացական բնույթի և չի արտացոլում իրերի իրական պատկերը:

Նույն 2004 թ.-ին հրապարակած իր մի քանի հոդվածներով ջավախահայությանն ու գիտական հանրությանը զարմացրեց պ.գ.դ., պրոֆեսոր Թինա Իվելաշվիլին: «Լիտերատուրա դա խելովներա» ամսագրի մի արտառոց հոդվածում նա հրապարակել էր «գաղտնի աղբյուրներից իրեն հասանելի դարձած» ահագանգը, թե ջավախահայերը, «Ջավախք» կազմակերպության միջոցով և Երևանի անմիջական ցուցումով, Ախալցխա քաղաքի Մարդա թաղամասում գտնվող եկեղեցու արևելյան ճակատին 2002 թ. փորագրել են մեծ չափի 9 տողանոց արձանագրություն⁵⁴: Պրոֆեսոր Թ. Իվելաշվիլին հիշյալ արձանագրությունը վերծանել է ակադեմիկոս Գ. Քուրդիանսիի և պրոֆ. Լ. Դավլիանիձեի հետ, որոնք ևս անուղղակիորեն հաստատում են Թ. Իվելաշվիլու մեղադրանքները: Չավեշտ է, բայց փաստ, որ Թ. Իվելաշվիլին նման կարգի մեղադրանքներ, որակումներ (կատարվածը համարում է բարբարոսություն, սրբապղծություն և այլն) տալուց առաջ անգամ պարզ հարցում չի արել տեղացիների շրջանում, թե Ախալցխայի Սբ. Վարդանանց հռչակավոր եկեղեցու պատի արձանագրությունը արդյո՞ք Մարդա կոչվող թաղամասում, միջնադարյան Սբ. Նշան եկեղեցու տեղում (այստեղից էլ՝ Սբ. Նշան բլրի անունը) Ախալցխայի պատվավոր քաղաքացի Վարդան Վարդանյանցի⁵⁵ կողմից 1861 թ.-ին հիմնադրված Սբ. Վարդանանց (Սբ. Նշան) եկեղեցու պատին 2002 թ.-ից առաջ նման մեծ չափի արձանագրություն եղե՞լ է, թե՞ ոչ: Պրոֆեսորի հոդվածում տեղ են գտել նաև Ախալցխայի ինչպես հիշատակված, այնպես էլ այլ եկեղեցի-հուշարձանների տեղում վրացական հետքերի որոնմանն առնչվող դրույթներ, այդ առիթով վրացի հեղինակներից մեջբերումներ և այլն: Մեր խնդրի շրջանակներից դուրս համարելով դրանց քննությունը՝ փաստենք միայն, որ «ջավախահայության բարբարոս վարքի արդյունքում 2002 թ.-ին Սբ. Վարդանանց եկեղեցու պատին հայտնված» մեծածավալ արձանագրությունն իրականում փորագրվել է եկեղեցու շինարարության ավարտական տարում՝ 1868 թ.-ին, հրատարակվել 1990 թ.-ին⁵⁶: Վրացի պրոֆեսոր Թ. Իվելաշվիլին բազմիցս ահագանգել է նաև, թե իբր ջավախահայերը դիտավորյալ ոչնչացնում են տեղի վրացերեն արձանագրությունները և տեղը դաջում հայերեն «հնաոճ» արձանագրություններ⁵⁷:

⁵⁴ “**«Լուրջնաճուրա և Նեղոցնեբա»** («Լիտերատուրա դա խելովներա» («Գրականություն և արվեստ»)), N 2, 2004, ցջ 22-23.

⁵⁵ Նահատական Ռ., Ախալցխայի պատվավոր քաղաքացին, «Գարուն», 1988, N 9, էջ 19-20:

⁵⁶ **Карапетян С., Марутян А., Наатакян Р.** Церковь Сурб Вардананц (Сурб Ншан) города Ахалцха, Еրաբեր հասարակական գիտությունների, 1990, N 5, С. 75-85:

⁵⁷ Վրացական մամուլի միջոցով նա ահագանգել է, օրինակ, թե իբր ջավախահայերը քերում ու ոչնչացնում են Ասպինձայի շրջանի ներկայումս վրացաբնակ Թոք գյուղի եկեղեցու վրացերեն արձանագրությունները, որոնց փոխարեն հայտնվում են հին հայերեն արձանագրություններ, տե՛ս “**«Երեմիանալո»** («Կրիմինալ»), N 44, 2004, “**«ՅեօրօՅ Յալուրա»** («Վիլիուս պալիտորա» («Շաբաթվա ներկայականը»)), N 44, 2004 և այլն: Ուշ միջնադարում թրքաբնակ, 1829-1830 թթ. Վարինց այստեղ տեղափոխված հայությանը համայնված, հետագայում վերստին հայաթափված (հայությունը տեղափոխվել է Ջավախքի Սամսար լեռան ստորոտ և հիմնել համանուն գյուղը) և զուտ թուրքաբնակ դարձած, 1944 թվականից թուրքերի՝ Միջին Ասիա տեղափոխվելուց հետո մի

Չավախքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացներին, հայվրացական պատմական վեճերին, ինչպես նաև Վրաստանի հայկական եկեղեցիների և այլ պատմաճարտարապետական հուշարձանների պատկանելության խնդրին «Գալոբա» թերթում անդրադառնում է վրաց շրջանակներում հայտնի հայագետ Բոնդո Արվելաձեն⁵⁸: Յեղիսակն իր հոդվածում խստորեն քննադատում է ջավախահայերին՝ մեղադրելով նրանց ինքնավարություն պահանջելու մեջ: Նա այդ առիթով հիշատակում է կրկին «Վիրք» չգրանցված կուսակցությանն ու նրա համանախագահներից Դավիթ Ռստակյանին՝ հավելելով, որ այս ողջ գործընթացների հիմնական մեղավորները հայ գիտնականներն են, որոնք տևական շրջան նպատակասլաց կերպով հաստատել են, որ Չավախքը հայկական հող է: Բ. Արվելաձեն հիշատակում և անխնա քննադատում է հուշարձանագետ Սամվել Կարապետյանին, որը շրջանառության մեջ է դրել Վրաստանի (այդ թվում Չավախքի) հայկական հուշարձանների վերաբերյալ գրքեր ու քարտեզներ⁵⁹, մեծանուն ճարտարապետ, հայ ճարտարապետության պատմության և տեսության լավագույն գիտակ Տիրան Մարությանին⁶⁰, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, համբավավոր հայագետ Նիկոլայ Տոկարսկուն⁶¹ և այլոց: Բ.Արվելաձեն ևս հավատարիմ է մնացել վրացական հասարակական-քաղաքական և գիտական-ակադեմիական շրջանակներում տիրող կարծրատիպերին և այդ ամենի համար մեղադրել է հայ քաղաքական կուսակցություններից մեկին՝ Հայ Յեղափոխական Դաշնակցությանը (ՀԶԴ): Իր հրապարակման մեջ կարմիր թելի նման տանելով ՀԶԴ գործունը՝ հեղինակը նշված քաղաքական կուսակցության՝ իր տեսանկյունից հակավրացական համարվող դերակատարումը տեսնում է գրեթե ամենուր՝ սկսած 20-րդ դարասկզբի իրադարձություններից, ջավախքյան ներկայիս զարգացումներից մինչև հուշարձանագետ Ս. Կարապետյանի կողմից Վրաստանի հայկական հուշարձանների մասին քարտեզների ու գիտական աշխատանքների հրատարակումը:

«Մեծ Հայաստան», «Արևմտյան Հայաստան», «Թուրքահայաստան», «Հայկական բարձրավանդակ», «Հայկական հարց» եզրույթների ու հասկացությունների «դիտավորյալ ստեղծման» և «դրանց միջոցով հարևանների (մասնավորապես՝ Վրաստանի) տարածքների նկատմամբ հավակնությունների համար» հայ հասարակական-քաղաքական հոսանքներին և վերջիններիս ներկայացուցիչներին ներկայացրած մեղադրանքներով է հանդես եկել «Ձորջիան թայմսի» հրապարակագիր Իրակլի Մանագաձեն: Նա այդ շրջանակներում խիստ քննադատության է ենթարկել ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Վահան Հովհաննիսյանին, որ թերթին տված մեկնաբանության մեջ նշել է, որ Վրաստանի տարածքային ամբողջականությունը խիստ կարևորում է, և դրա շրջանակներում հարկ է, որ գերազանցապես հայաբնակ Սամցխե-Չավախքին տրվի ինքնավար կարգավիճակ⁶²: Վահան Հովհաննիսյանի՝

քանի ընտանիք վրացիներով, ավելի ուշ վերստին հայերով բնակեցված Թոք գյուղի մասին առավել հանգամանորեն տե՛ս **Կարապետյան Ս.**, Չավախք, Երևան, 2006, էջ 209-210:

⁵⁸ “galoba” («Գալոբա» - «Դայլայլ, երգեցողություն»), N 4, 2005.

⁵⁹ Տե՛ս **Կարապետյան Ս.**, Չավախքի խաչքարերը, Երևան, 1995, **Կարապետյան Ս.**, Հայկական եկեղեցիները Վրաստանում, ցուցակ և քարտեզ, Երևան, 1995 և այլն: Սամվել Կարապետյանի՝ դաշտային հետազոտությունների և գրավոր աղբյուրների ուսումնասիրության շնորհիվ հիշյալ ցուցակ-քարտեզում հաշվառած և ներկայիս Վրաստանի տարածքում գտնվող շուրջ 650 եկեղեցիների շուրջ կեսը Բոնդո Արվելաձեն համարում է վրացական (տե՛ս “Գալոբա” («Գալոբա» - «Դայլայլ, երգեցողություն»), N 4, 2005):

⁶⁰ Նկատի է առնվում Տ. Մարությանի կողմից հրատարակված «Տայքի ճարտարապետական հուշարձանները» (Ե., 1972) և «Հայ ճարտարապետության հուշարձաններ. խորագույն Հայք» (Ե., 1978) աշխատությունները:

⁶¹ Յեղիսակը մատնացույց է անում Ն. Տոկարսկու հրատարակած «Архитектура Древней Армении» (Ե., 1946) աշխատությունը:

⁶² “Ջորճիան տայմսի” («Ձորջիան թայմս»), N 44, 2005.

ջավախահայության քաղաքացիական ու սոցիալական իրավունքների անպաշտպան լինելու մասին մեկ այլ հայտարարությանն արձագանքելով՝ պատմաբան – հրապարակագիր Գերոզի Ուձիլաուրիին վերստին քննադատում է և՛ Հայաստանին (Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությանը)՝ «Մեծ Հայաստանի» վերականգնման ծրագրերով առաջնորդվելու համար, և՛ ջավախահայության շրջանում գործող կազմակերպություններին՝ ջավախահայության շրջանում տարվող խտրական քաղաքականության դեմ բողոքի այլ քաղաքացիական գործունեության համար, և՛ Կրաստանի իշխանություններին (Նախագահ Մ. Սահակաշվիլուն)՝ ջավախահայերին խաբելու, տված խոստումները չկատարելու պատճառով «անջատողականների գործունեության համար պարարտ հող ստեղծելու» համար: Պատմաբանը, որպես վրաց հեղինակների շրջանում կարծրացած օրինաչափություն, ամենևին նպատակ չունենալով իրերը քննել համակողմանի և անաչառ լույսի ներքո, ձգտելով ամեն կերպ խտացնել գույները՝ գրում է, որ տվյալ ժամանակաշրջանում Ջավախքում գրեթե չի գործել Կրաստանի իրավասությունը, Սահմանադրությունը, ոստիկանությունը, հայերը վրացերենով չեն խոսում, դեմ են դուրս գալիս փաստաթղթերը վրացերենով կազմելուն, պետական հիմնարկների շենքերին ամրացնում են ՀՀ պետական դրոշը, բնակչությունը զինված է, Կրաստանի քաղաքացին իբրև թե ազատ չի կարող շրջել Ջավախքով, ինչպես Աբխազիայում և այլն⁶³: Գրեթե նույն տեսանկյունից է Ջավախքի հիմնահարցին մոտեցել և մեղադրանքների նույնական վեկտորներ ընտրել Կրաստանի Ավանդականների կուսակցության անդամ, պատմաբան Գուբազ Սանիկիձեն «Ռա՛ո-ռա՛ո» թերթին տված հարցազրույցում: Թերթն ամբողջությամբ արտատպել է ջավախահայ հասարակական գործիչներ Ե. Շիրիյանի և Ա. Վարդապետյանի կողմից «Ջավախք» թերթում 1998 թ.-ին հրապարակված «*Ջավախքի ինքնավար հանրապետության ապագա սահմանադրության հիմնադրույթները (Նախագիծ)*» վերտառությամբ փաստաթուղթը⁶⁴ և Գ. Սանիկիձեի մեկնաբանությունները, որտեղ պատմաբան-քաղաքական գործիչը դատապարտում է հայերի՝ «Մեծ Հայաստան» կերտելու երազանքը և հիշեցնում, որ ՀՀ-ի՝ Կրաստանի հետ ընդհարումն առիթ կձառայի Ադրբեջան-Կրաստան-Թուրքիա այլաբանական ծնադրումանը, ինչը կործանարար կարող է լինել Հայաստանի համար⁶⁵: «Արգումենտի» թերթին տված ծավալուն հարցազրույցում էլ Ավանդականների կուսակցության անդամը, վերստին քննադատելով Կրաստանի իշխանություններին՝ երկիրը ոչ ճիշտ ուղիով տանելու, ազգային արժեքներով չառաջնորդվելու և օտարերկյա կազմաբանողիչ ուժերի առջև երկրի դարպասները բացելու համար, փաստում է, որ եթե Ջավախքում հայերին, իսկ Զվեմո Զարթիում ադրբեջանցիներին տրվի ինքնավարություն, վերաբնակեցվեն թուրք-մեսիտեթիները, վերջնականապես կկորսվեն Աբխազիան ու Հարավային Օսեթիան (վրացական եզրույթով՝ Սամաչաբլուն), ապա իրենք որպես ազգ, որպես երկիր կվերանան⁶⁶:

⁶³ “ახალი თაობა” («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 353, 2005.

⁶⁴ Հայտնի հասարակական գործիչներ, մտավորականներ Երվանդ Շիրիյանը և Արտաշես Վարդապետյանը ժամանակին հանրային քննարկման են ներկայացրել «*Ջավախքի ինքնավար հանրապետության ապագա սահմանադրության հիմնադրույթները (Նախագիծ)*» վերտառությամբ փաստաթուղթը (տե՛ս «Ջավախք», թիվ 2, 1998), որտեղ մանրակրկիտորեն մշակել և 35 ամփոփ կետերի մեջ ներկայացրել են Ջավախքի ապագա ինքնավար հանրապետության սահմանադրության դրույթները: Թերթի նույն համարում տպագրվել է նաև «*Ջավախքի կարգավիճակը (Նախագիծ): Ջավախքի տարածքային ինքնավարության ստեղծման հիմնավորումը*» վերտառությամբ հրապարակումը, որում ներկայացվում են Ջավախքի ինքնավարության անհրաժեշտության մասին պատմական ու իրավական մի շարք հիմնավորումներ:

⁶⁵ «რად-რად ?» («Ռա՛ո-ռա՛ո» - «Ի՛նչ-ի՛նչ»), N 18, 2005.

⁶⁶ “არგუმენტი” («Արգումենտի»), N 3, 2005.

Թեև Հայաստանին, հայությանը կամ ջավախահայությանը չի հիշատակում, այդուհանդերձ Ջավախքի հնարավոր կորստյան հարցն է բարձրացնում հասարակական գործիչ, պրոֆեսոր Գոգի Դոլիձեն: Խոսելով Ջավախքում վերաբնակված աջարացիների հիմնախնդիրների⁶⁷ և վերջիններիս անհապաղ սոցիալական օժանդակության հատկացման կարևորության մասին՝ Գ. Դոլիձեն փաստում է, որ եթե ժամանակին չգբաղվեն Նինոծմինդայի շրջանի այդ մեկ-երկու փոքրիկ, բայց Կրաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող վրացաբնակ գյուղերի ամրացման աշխատանքներով, ապա առանց պայթարի ու արյունահեղության կկորցնեն «Կրաստանի այդ օրինյալ հարավը»⁶⁸: Պրոֆեսորը կոչ է անում ամեն կերպ լծվել «Ջավախքը փրկելու ծրագրերին»: Նա հատկապես շեշտում է Աջարիայի բնական աղետներից տուժածներին մեծ թափով Ջավախքում (ռուս-դուխոբորների լքած գյուղերում) վերաբնակեցնելու կարևորությունը՝ նշելով, որ իրենք առաջարկություն են ներկայացրել պատրիարքարանին՝ «Ջավախքը վերադարձնելու համար սկսել ժողովրդական մեծ շարժում»:

Թեև ջավախահայությանը ծայրահեղ մեղադրանքներ չի ներկայացրել և համեմատաբար քաղաքավարի է արտահայտվել Ջավախքում առկա հիմնախնդիրների, ջավախահայության պահանջների վերաբերյալ, Կրաստանի հորհրդարանի պատգամավոր Ալեկո Շալաբերիձեն, այդուհանդերձ, Ջավախքի տարբեր շրջաններում իրականացվելիք մի շարք ներդրումային, սոցիալ-տնտեսական ու կրթական ծրագրերի թվարկման համատեքստում չի ժխտում «անջատողականության» առկայությունը: Ավելին՝ հենց այդպիսի ենթադրյալ տրամադրությունների չեզոքացման համար հասարակական-քաղաքական գործիչն առաջարկում է Ջավախքում իրականացնել թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ վրացերենի ուսուցմանն ու կիրարկմանն ուղղված հատուկ քաղաքականություն⁶⁹: Խորհրդարանի մեկ այլ պատգամավոր Դավիթ Սագանելիձեն, թեև ուղղակի չի քննարկում Ջավախքի խնդիրը, այդուհանդերձ կտրուկ կերպով հակադրվում է տարանցիկ ուղիների և տրանսպորտային միջանցքների տարածաշրջանային նախագծերին ՀՀ-ի ներգրավվածության մասին ՀՀ-ի պաշտոնական առաջարկներին: «Ալիա» թերթին տված հարցազրույցում պատգամավորը ներկայացնում է, թե ինչպես 2005 թ.-ին Տիրանայում կայացած ՄՕՏՀԿ ԽՎ Գլխավոր Ասամբլեայի նիստի ժամանակ դեմ է դուրս եկել ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաթու երկաթգծային նախագծում Ախալքալաքը Գյումրիով փոխարինելու, արխագական երկաթուղու վերագործարկման և այլ առաջարկներին, որոնք կենթադրեին ՀՀ-ի մասնակցությունը տարածաշրջանային նախագծերին⁷⁰: Ներկայացնելով Թուրքիայի և Ադրբեջանի՝ Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաթու երկաթուղին ՀՀ-ով անցկացնելու հարցում մերժողական դիրքորոշումները՝ վրացի պատգամավորի կարծիքով հայկական կողմի նպատակն է եղել տապալել այդ կարևոր նախագիծը: Ինչպես Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաթու, այնպես էլ Բաթում-Գյումրի երկաթուղային նախագծերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշումներն անհիմն կամ անիրականանալի են համարել նաև քաղաքագետներ Գիա Խուխաշվիլին և Ռամազ Սաղվարելիձեն: Առաջինն անիրականանալի է համարում Բաթում-Գյումրի նախագիծը, իսկ Ռ. Սաղվարելիձեն այն կարծիքին է, որ հայկական կողմը փորձում է Ջավախքի

⁶⁷ Պրոֆեսորը հարցազրույցում ներկայացնում է Ջավախքի ռուս-դուխոբորների լքած գյուղերից մեկում Նինոծմինդայի շրջանի Սպասովկա գյուղում հաստատված աջարացիների խնդիրները և ինչպես այդ, այնպես էլ Սամբա (Ջավախքի փոքր գյուղերից է, խորհրդային շրջանում կոչվել է Կալինինո, ավելի վաղ՝ Տրոիցկոյե) գյուղում իրականացված իրենց բարեգործական ծրագրերը:

⁶⁸ «Թեթեման» («Ռեզոնանս») («Ռեզոնանս»), N 321, 2005.

⁶⁹ «Նեալո տաթա» («Ախալի թաթա») («Նոր սերունդ»), N 357, 2005.

⁷⁰ «Նեալո» («Ալիա») («Վերադարձ»), N 144, 2005.

միջոցով շանտաժի ենթարկել և Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաբու Նախագծի հարցում իր շահերը թելադրել, ինչը ցավալի է, բայց բնական⁷¹: Կարս-Ախալքալաք-Բաբու Նախագծի իրականացման դեմ պայքարելու, այդ հարցում ԱՄՆ հայկական լոբբի շահերը պաշտպանելու հայամետ դիրքորոշումների համար «Ասավալ-դասավալի» թերթի հրապարակագիրը ծանր մեղադրանքներ է ներկայացնում Կրաստանի վարչապետ Չուրաբ Ժվանիային՝ փաստելով, որ ԱՄՆ-ի հայկական լոբբիստական շրջանակները մինչև 2003 թ.-ի Նոյեմբերի «Կարդերի հեղաշրջումը» աջակցել են Չ. Ժվանիային, որպեսզի վերջինս դառնա Կրաստանի Նախագահ⁷²: Կարս-Ախալքալաք-Բաբու երկաթգծային Նախագծի իրականացումը Չավախբում ծնելու է լարվածություն և բերելու է անջատողականության. այս կարծիքն է հայտնել Կովկասի հարցերով փորձագետ Մամուկա Արեշիձեն՝ փաստելով, որ Չավախբում բախումներն անխուսափելի կլինեն: Կերլուծելով ստեղծվելիք իրավիճակը՝ քաղաքագետը չափազանց մեծ կարևորություն է տվել Նախագծին՝ ոչ միայն Եվրոպայի հետ միանալու, այլև տարածաշրջանում (Չավախբում) անջատողական տրամադրությունների զսպման առումով⁷³: Կարս-Ախալքալաք-Բաբու երկաթուղու կառուցման մասին պայմանագրերի կնքմանը մեծ կարևորություն է տալիս քաղաքագետ Սոսո Ցիսկարիշվիլին և մեղադրում Հայաստանին՝ ՌԴ-ի ազդեցության տակ գտնվելու, սեփական ռազմական հաջողություններով տարվելու և Ադրբեջանի հետ լարված հարաբերությունների պահպանման համար: Ըստ քաղաքագետի՝ Կրաստանը շահագրգռված է կայուն և իրավահավասար հարաբերություններ հաստատելու ինչպես Ադրբեջանի, այնպես էլ ՀՀ-ի հետ, սակայն ՀՀ-ն, ըստ Ս. Ցիսկարիշվիլու, վերոհիշյալ իրողությունների պատճառով դուրս է մտնում մեծ Նախագծերից⁷⁴:

Անդրադառնալով տարածված լուրերին, թե ՀՀ-Կրաստան սահմանը ևս հսկվելու է ՀՀ-ում տեղակայված ռուսական սահմանապահ զորքերի կողմից, «Կվիրիս պալիտրա» թերթի հրապարակագիրը, կրկին տուրք տալով երևակայությանը, կարծիք է հայտնել, որ ռուսական զորքերի կողմից վերահսկվող ՀՀ-Կրաստան անցակետերից թույլատրվելու է Չավախբ անցնել «անջատողականների աջակիցներին»⁷⁵: Չավախբում հնարավոր լարվածության խորացում է կանխատեսել հայտնի քաղաքագետ Ռամազ Սաղվարեիձեն: Խոսելով չճանաչված պետությունների՝ Աբխազիայի, Հարավային Օսեթիայի ու Լեռնային Ղարաբաղի շուրջ տարածաշրջանում ընթացող գործընթացների և այդ ամենի համատեքստում ՌԴ շահերի մասին՝ քաղաքագետը Չավախբում լարվածության հնարավոր խորացումը կապում է Կրաստանի՝ ԱՊՀ-ից դուրս գալու ցանկությունների իրագործման և ՌԴ-ի՝ այդ առիթով ձևավորվելիք Նոր սպառնալիքների հետ⁷⁶: Չավախբում 2000-ական թթ. սկզբից գործող «Ա-ինֆո» լրատվական գործակալության ղեկավարին անջատողական է անվանել պատմաբան-հրապարակագիր Գեորգի Ուժիլուրին: Անդրադառնալով Զվեմո Զարթլի Նահանգում բնակվող ադրբեջանցիների պահանջներին, այնտեղ գործող ադրբեջանական կազմակերպությունների և այդ կազմակերպությունների ղեկավարներից ոմանց, իր

⁷¹ “**Րեֆորմանո**” («Ռեգոնասսի» («Ռեգոնասս»)), N 290, 2005. Նույն խնդրի մասին Ռ. Սաղվարեիձենի մեկ այլ հարցազրույցը տե՛ս “**Կրեյլա Նոսեղ**” («Ղվելա սիախլե» («Ամեն Նորություն»)), N 35, 2009. ՀՀ-Թուրքիա հարաբերությունները վերլուծելով՝ քաղաքագետն այստեղ այն կարծիքին է, որ Կարս-Ախալքալաք-Բաբու Նախագծի բարեհաջող իրականացման դեպքում ՀՀ-ն հայտնվում է խաղից դուրս վիճակում:

⁷² “**Անջաղ-ճանջաղ**” («Ասավալ-դասավալի» («Կերելք-վայրեքք»)), N 3, 2007.

⁷³ “**Կրեյլա Նոսեղ**” («Ղվելա սիախլե» («Ամեն Նորություն»)), N 3, 2007.

⁷⁴ “**Կեյրոն Քալոցրա**” («Կվիրիս պալիտրա» («Շաբաթվա Ներկայակակը»)), N 3, 2007.

⁷⁵ “**Կեյրոն Քալոցրա**” («Կվիրիս պալիտրա» («Շաբաթվա Ներկայակակը»)), N 13, 2006.

⁷⁶ “**Րեֆորմանո**” («Ռեգոնասսի» («Ռեգոնասս»)), N 31, 2006.

որակմամբ՝ անջատողական ու հակապետական գործունեությանը⁷⁷ Գ. Ուծիլաուրին զուգահեռներ է տանում դրանց և Ջավախքում գործող որոշ կազմակերպությունների միջև⁷⁸:

Ջավախքի առանձին շրջանների ժողովրդագրական պատկերի, հասարակական-քաղաքական իրադրության և վրացաբնակ որոշ բնակավայրերի խնդիրների ներկայացման համատեքստում կրկին ազգային նուրբ հիմնահարցերն են շոշափել «Ախալի 7 դղե» թերթի հրապարակագիրներ Գերոգի Սաբանաձեն և Իյա Ջանաշիան: Վերջիններս նույնպես ջավախահայության արդարացի պահանջներն ուղղակի կամ նուրբ ենթատեքստերի միջոցով ներկայացնում են բոլորովին այլ լույսի ներքո՝ տեղի հայկական կազմակերպությունների ղեկավարներից ոմանց («Վիրք» կուսակցություն, Ջավախքի ընտանացական մարզամշակութային միություն ևն) անուղղակիորեն ներկայացնելով որպես ծայրահեղականների⁷⁹: Ջավախքը Ռուսաստանի պլացդարմ և գրեթե Աբխազիային և Հարավային Օսեթիային (վրաց.՝ Սամաչաբլոյին) հավասար անջատողական տարածք է դիտարկում նաև Վրաստանի ժողովրդական ֆորումի առաջնորդներից մեկը՝ Գուբազ Սանիկիձեն, որ, խոսելով Վրաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցությամբ պայմանավորված հնարավոր զարգացումների մասին, կարծիք է հայտնում, որ ՆԱՏՕ-ն ոչ թե կամբողջացնի Վրաստանը, այլ մի շարք տարածքներ կհանձնվեն Ռուսաստանին: Քաղաքական գործիչը, որպես այդ գործընթացի բերմամբ հնարավոր կորսնցվելիք երկրամասեր, դիտարկում է Աբխազիան, Հարավային Օսեթիան և Ջավախքը⁸⁰: Այդպիսի տրամադրություններով է լցված նաև պատմաբան-հրապարակագիր Գերոգի Ուծիլաուրիի հոդվածը, որում հեղինակը համապատասխանաբար գերազանցապես հայաբնակ ու ադրբեջանաբնակ Սամցխե-Ջավախքի և Զվեմո Քարթլի նահանգները դիտարկում է որպես անջատողական տարածաշրջաններ: Վերլուծելով աշխարհաքաղաքական զարգացումները, ընդհանուր գծերով ներկայացնելով ՀՀ-Վրաստան, Ադրբեջան-Վրաստան հարաբերությունները և Ռուսաստանի ու Թուրքիայի տարածաշրջանային շահերը՝ Գ. Ուծիլաուրին Այսրկովկասում անջատողականության հրահրման մեջ գլխավորապես մեղադրում է Ռուսաստանին, իսկ կոնկրետ Սամցխե-Ջավախքում և Զվեմո Քարթլիում, ըստ պատմաբանի, անջատողական տրամադրությունների հրահրմամբ շահագրգռված են համապատասխանաբար պաշտոնական Երևանն ու Բաթումը⁸¹: Գ. Ուծիլաուրին նույն թերթի այլ համարներում ևս խոսում է Վրաստանի հայաբնակ ու ադրբեջանաբնակ տարածաշրջաններում հնարավոր լարվածության օջախների առաջացման վտանգի մասին: Նա գրեթե առանց բացառության անջատողական է համարում բոլոր այն հայազգի գործիչներին, որոնք բարձրացրել են ջավախահայությանը հուզող հիմնահարցերը կամ առնչվել Ջավախքի այս կամ այն խնդրի հետ⁸²: Գ. Ուծիլաուրին մերթ մեղադրում է Վրաստանի Մարդու իրավունքների պաշտպան Սոզար Սուբարին՝ Սամցխե-Ջավախքի հայկական հասարակական կազմակերպությունների (իր

⁷⁷ Վրաստանի՝ մեծամասամբ ադրբեջանաբնակ Զվեմո Քարթլի նահանգում գործող հայտնի կազմակերպությունների և դրանց ղեկավարների գործունեության մասին առավել հանգամանալից տե՛ս **Սարգսյան Վ.**, Հյուսիսային Լոռի, Հայոց Հյուսիսային դարպասները. *Ջավախք, Լոռի, հ. 2, Երևան, 2009, էջ 24-78*:

⁷⁸ «ՆՅՁԼԻ ՏՊԵԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 182, 2006.

⁷⁹ «ՆՅՁԼԻ 7 ԸԸԵՂ» («Ախալի 7 դղե» («Նոր 7 օր»)), N 40, 2005.

⁸⁰ «ՆՅՁԼԻ ՏՊԵԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 331, 2005.

⁸¹ «ՆՅՁԼԻ ՏՊԵԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 116, 2005.

⁸² Հոդվածներից մեկում Գ. Ուծիլաուրին «անջատողական» է անվանում «Ա-ինֆո» լրատվական գործակալության տնօրեն, պ.գ.թ. Խ. Ստեփանյանին, Ռախայանների տոհմին և նրա ներկայացուցիչ, Խորհրդարանի պատգամավոր Մ. Ռախայանին և այլոց («ՆՅՁԼԻ ՏՊԵԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 46, 2006).

բնորոշմամբ՝ անջատողական արմատականների կամ «դաշնակցականների» շրջանակներում հարգանք վայելելու, առկա խնդիրները վերջիններիս հետ քննարկելու⁸³, մերթ Կրաստանի Նոր ղեկավարությանը՝ սեփական անջատողականության նվազեցման կամ չեզոքացման ուղղությամբ ծրագրեր չունենալու համար⁸⁴: Չնայած ընդգծված ադրբեջանասետ տրամադրություններին և Ի. Ալիևի ռեժիմի հետ հարաբերությունների Էլ առավել ջերմացման կողմնակից լինելուն՝ հեղինակը, այդուհանդերձ, դեմ է թուրք-մեսխեթցիների՝ Չավախբում վերաբնակվելուն և դրանով իսկ Թուրքիայի ազդեցության խորացմանը Կրաստանի հարավում⁸⁵:

Չավախբի հիմնահարցին վրաց հասարակական-քաղաքական տիրույթում այս կամ այն կերպ անդրադարձ է եղել նաև թուրք-մեսխեթցիների վերադարձի կամ հայրենադարձման գործընթացը քննարկելիս: Տվյալ դեպքում կարելի է ասել, որ դավանանքի մատնանշման (թուրք-մուսուլման) և աշխարհագրական տեղանվան (Մեսխեթ-Մեսխունիք) զուգակցմամբ իր անվանումը ստացած և ծագումնաբանության խնդրում միևնույն օրս բազմաթիվ գիտական վեճերի ու քննարկումների տեղիք տված թուրք-մեսխեթցիների՝ Չավախբի տարբեր շրջաններ վերադարձի հիմնահարցն ինքնին դարձել է Չավախբի հիմնահարցի բաղկացուցիչ մասը: Կրաց հասարակական-քաղաքական միտքը հիմնականում կողմ է թուրք-մեսխեթցիների հայրենադարձմանը⁸⁶ և Կրաստանի՝ Եվրախորհրդի առջև ստանձնած պարտավորությունների կատարմանը միայն այն դեպքում, երբ վերջիններս կընդունեն, որ իրենք ծագումով վրացի են, կկրեն (ըստ վրացական տեսակետի՝ կվերականգնեն) վրացական ազգանուններ, կսովորեն վրացերենն ու կինտեգրվեն վրացական միջավայրին: Կրաց հասարակական-քաղաքական շրջանակները համակարծիք են այն տեսակետին, որ թուրք-մեսխեթցիների՝ Չավախբում հոծ խմբերով վերաբնակեցումը ծնելու է պայթյունավտանգ իրադրություն⁸⁷, Էթնոբախումներ հայ ազգաբնակչության հետ⁸⁸, Կրաստանի դեմ ԶԶ-ի և

⁸³ «ՆՅՃԼՈ ՏՁՓԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 25, 2006.

⁸⁴ Հոդվածներից մեկում, օրինակ, մեղադրանքներ են ներկայացվում Նախագահ Ս. Սահակաշվիլուն առ այն, որ նա չի կարողանում նվազեցնել լարվածությունը Ախալբալքի Գումբուրդո գյուղում, որտեղ, ըստ Նրա, գործում են հայ «անջատողականները»: Խոսքը վերաբերում է գյուղում վեր խոյացող հոյակերտ եկեղեցու շուրջ առկա վեճին: Եկեղեցին հայտարարված է վրացական, և գյուղացիները գրկված են այն տնօրինելու իրավունքից, ինչն էլ հանդիսանում է գյուղում մերթնդմերթ սաստկացող լարվածության պատճառ («ՆՅՃԼՈ ՏՁՓԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 14, 2006):

⁸⁵ «ՆՅՃԼՈ ՏՁՓԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 152, 2005, «ՆՅՃԼՈ ՏՁՓԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 6, 2006. Հոդվածագիր Թեա Մարխվախձեն թուրք-մեսխեթցիների վերադարձի խնդիրը համարում է Կրաստանի առջև ծառայած ծանր մարտահրավեր և այդ շրջանակներում քննադատության ենթարկում Կրաստանի ադրբեջանցիների ազգային ասամբլեայի առաջնորդ Դաշգին Գյուլամեդովին, ով պահանջել է անհապաղ վերաբնակեցնել թուրք-մեսխեթցիներին Չավախբի այն բնակավայրերում, որոնցից Նրանց աքսորել են 1944 թ.-ին: Կրացի հրապարակագիրը Դ. Գյուլամեդովի, իր բնորոշմամբ, հակավրացական գործունեությունը նմանեցնում է Չավախբում գործող «Չավախբ ժողովրդավարական շարժման» և «Կիրք» չգրանցված կուսակցության գործունեությանը:

⁸⁶ Այդուհանդերձ, զգալի է նաև այն գործիչների կամ հասարակական-քաղաքական շրջանակների թիվը, որոնք թուրք-մեսխեթցիներին համարում են թուրք և կտրուկ դեմ են Նրանց վերադարձին (տե՛ս, օրինակ, «21-րդ դար» քաղաքական միավորման առաջնորդ Էլիզբար Չանելիձեի տեսակետն այդ մասին («ՆՅՃԼՈ ՏՁՓԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 26, 2006)):

⁸⁷ Տե՛ս այդ մասին Գուբազ Մեգրելիձեի ծավալուն հոդվածը («ՅՈՏՈ» («Ախի» («Արշալույս»)), N 6, 2005):

⁸⁸ Պատմաբան-հրապարակագիր Գեորգի Ուժիլաուրին անդրադառնում է թուրք-մեսխեթցիների՝ Կրաստանում վերաբնակեցման և տեղաբաշխման խնդրին: «Որտե՞ղ պետք է բնակվեն շուրջ կես միլիոն թուրքերը». սույն հարցադրմանն ի պատասխան՝ հոդվածագիրը

ՌԴ-ի կողմից իրականացվելիք սադրանքներ⁸⁹ և այլն: Վրաց հասարակական-քաղաքական շրջանակներում կա նաև այն կարծիքը, որ թուրք-մեսխեթցիներին աքսորել է ԽՍՀՄ-ը, և այժմ նրանց առջև իրավական, նյութական, բարոյական և այլ տիպի պարտավորություններ ունի ոչ թե Վրաստանը, այլ Ռուսաստանը՝ որպես ԽՍՀՄ իրավաժառանգորդ պետություն⁹⁰: Վրացական հասարակական-քաղաքական որոշ շրջանակներ էլ պահանջում են, որպեսզի Վրաստանի Խորհրդարանը համապատասխան օրենքի ընդունման միջոցով իրավաքաղաքական գնահատական տա 1918-1919 թվականներին Մեսխեթում (Սամցխե-Ախալցխայի գավառ) տեղի ունեցած իրադարձություններին: Ըստ հասարակական-քաղաքական գործիչ և նշված խնդրի հենքի վրա պատրաստված օրենքի նախագծի հեղինակ Դավիթ Արաբիձեի՝ տեղի մահմեդականների (իմա՝ թուրք-մեսխեթցիների) կողմից «դրսի կայսերական ուժերի ռազմաքաղաքական աջակցմամբ» (նկատի է առնվում Թուրքիային - Վ.Ս.) իրականացվել է Մեսխեթում ապրող քրիստոնյա վրացիների եթնիկ զտում և բռնագաղթ⁹¹:

ՀՀ-Վրաստան-Ռուսաստան բազմակողմ հարաբերությունների քննարկման համատեքստում Ջավախքի հիմնահարցին լայնորեն անդրադարձել է քաղաքագետ Սոսո Ցինցաձեն: Միակողմանի լույսի ներքո ներկայացնելով խնդիրները՝ քաղաքագետը քննադատում է հայկական կողմին և՛ Վրաստանի տարածքում գտնվող հայկական եկեղեցիները պահանջելու, և՛ վրաց-աբխազական երկաթուղու վերագործարկման

քննարկում և մատնանշում մի շարք նահանգներ ու շրջաններ և հանգում այն եզրակացության, որ և՛ կոմպակտ բնակեցման դեպքում, և՛ բոլոր շրջաններում հավասարաչափ տեղաբաշխման պարագայում առաջանալու են անհարթահարեի խոչընդոտներ՝ տեղիք տալով բախումների և ծանր հետևանքների: Գ. Ուժիլաուրին նույնպես բացառում է թուրք-մեսխեթցիների՝ Սամցխե-Ջավախքում վերաբնակեցման տարբերակը՝ փաստելով, որ այն տեղի քրիստոնյաների և հատկապես հայերի հետ անխուսափելի բախումների առիթ կծառայի: Հետաքրքրական է, որ վրացի հեղինակը թուրք մեսխեթցիների՝ Սամցխե-Ջավախք վերաբնակեցվելու՝ իր կողմից մերժելի տարբերակի քննարկման համատեքստում մատնանշում է «պատմական արդարության սկզբունքը», այն է՝ ջավախահայության՝ իրենց պատմական հայրենիք տեղափոխվելու անհրաժեշտությունը («**ახალი თაობა**» («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»), N 30, 2006)):

⁸⁹ Հասարակական-քաղաքական գործիչ Գիա Ամաշուկելու կարծիքով՝ թուրք-մեսխեթցիներին Ջավախքում վերաբնակեցման պարագայում ՌԴ-ն և ՀՀ-ն կիրականացնեն սադրանքներ, բախումներ, ինչի արդյունքում Հայաստանը կարող է իրականացնել դեպի ծով ճանապարհի ձեռք բերելու իր վաղեմի երազանքը (**“yvela siagle”** («Ղվելա սիախլե» («Ամեն Նորություն»)), N 3, 2007):

⁹⁰ Տե՛ս այդ մասին «Արգունենտի» թերթի հրապարակումը (**“არგუმენტი”** («Արգունենտի» («Արգունենտ»)), N 13, 2005):

⁹¹ **“ახალი თაობა”** («Ախալի թաոբա» («Նոր սերունդ»)), N 2, 2006. Խոսքը վերաբերում է 1918 թ.-ի առաջին կեսին թուրքական կանոնավոր զորքերի՝ Ախալցխայի գավառ ներխուժմանը, Ախալցխայի գավառի հայության շուրջ 6-ամսյա (1918 թ. առաջին կես) հերոսական ինքնապաշտպանությանը և դրան հաջորդող թուրքական տիրապետության շրջանին, երբ թուրքական կանոնավոր զորքերի անմիջական դրոմամբ և հովանավորությամբ ակտիվացել էր տեղի մահմեդական տարրը և ստանձնել էր այսպես կոչված 5-րդ շարասյան դեր: Վրացի գործիչը, ցավոք, չի հիշատակում ախալցխահայության մղած հերոսամարտը, Ախալցխայի հռչակավոր քաղաքագլուխ Չորի Չորյանի վճռորոշ դերակատարությունը՝ տեղի ազգաբնակչության ինքնապաշտպանության կազմակերպման և արյունալի կոտորածներից փրկելու գործում: Հենց Ախալցխացի նշանավոր հայդուկապետների գլխավորած զինյալ ջոկատների, տեղ-տեղ նաև հայ-վրացական զինակցության շնորհիվ էր, որ կոտորածներից փրկվեցին նաև առանձին վրացաբնակ գյուղեր և թուրքերի կողմից գերեվարված վրացի կանայք ու երեխաներ: Առավել հանգամանալից տե՛ս **Մելքոնյան Ա.**, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, **Սիմոնյան Ե.**, Ախալցխան կրակ է օդակում, Երևան, 2000, **Սանոսյան Ա.**, Ախալցխայի և Ախալքալաքի գավառների 1918 թ. ինքնապաշտպանությունը, Երևան, 1992 և այլն:

առաջարկների (քաղաքագետը դրանում Աբխազիայի առանձնացման և որպես կողմ հանդես գալու վտանգ է տեսնում), և՛ Վրաստանի հանդեպ, իր որակմամբ, թշնամական տրամադրություններ հրահրելու, և՛ վրաց-ադրբեջանական հարաբերություններում տիպիկ միջադեպերի պատճառ հանդիսանալու համար: Քաղաքագետն առանձնակի մեղադրանքներ է ներկայացնում պաշտոնական Երևանին՝ ՌԴ-ի՝ տարածաշրջանային ակտիվացման պայմաններում Վրաստանի տարածքային ամբողջականության դեմ գործելու և Չավախբում ինքնավարության պահանջների առաջադրման համար⁹²: Ամենակին հաշվի չառնելով տեղանունների՝ տվյալ լեզվով գործածման կանոններն ու առանձնահատկությունները՝ քաղաքագետը Երևանին, տվյալ շրջանում ՀՀ իշխանության մաս կազմող ՀՀ Դաշնակցություն կուսակցությանը և բարձրաստիճան որոշ պաշտոնյաների մեղադրում է անգամ «Չավախեթին բոլոր փաստաթղթերում «Չավախբ» նշելու», ինչպես նաև բացահայտորեն ինքնավարություն պահանջելու համար⁹³: Քաղաքագետը խորհրդային քաղաքականության արդյունք է համարում նաև այն իրողությունը, որ ջավախահայությունը չի տիրապետում վրացերենին⁹⁴: Մերժելով ջավախահայության տեղաբնիկության իրողությունը՝ 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո (արդյունքում) Չավախբի շրջաններն առաջին անգամ հայերով բնակեցնելու թեզն է կրկին թմբկահարում պատմաբան-հրապարակագիր Գոգա Գոգիելին: Խեղելով պատմական իրողություններն ու փաստերը՝ հեղինակը եզրակացնում է, որ իբր պատմական բոլոր ժամանակաշրջաններում հայերը դավաճանել են Վրաստանին, Հայոց ցեղասպանությունից հետո և այլ ժամանակահատվածներում պատսպարվելով Վրաստանում՝ իբր միշտ (խորհրդային, հետխորհրդային և այլ շրջաններում) գործել են Վրաստանի դեմ: Բնականաբար, հողվածագիրն առիթը բաց չի թողել և պարսավանքի նիզակներն ուղղել է նաև ջավախահայությանը և այնտեղ գործող կազմակերպությունների դեմ՝ մեղադրելով վերջիններիս ինքնավարության պահանջների առաջադրման և այլնի համար⁹⁵: 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Չավախբում հայերի՝ առաջին անգամ «հայտնվելու» մասին Գ. Գոգիելիի կարծիքն է կրկնում պատմաբան, խորհրդարանի պատգամավոր Գուբազ Սանիկիժեն: Պատգամավորը ևս բացառել է Վրաստանի տարածքում հայկական ինքնավարության ստեղծումը, իսկ ջավախահայության կողմից բարձրացված մի շարք ազգային խնդիրների պատճառը համարել է առկա և Վրաստանի իշխանությունների կողմից տարիներով չլուծված սոցիալ տնտեսական խնդիրները (մայրաքաղաքի հետ կապող բարեկարգ ճանապարհների, տնտեսական, մշակութային սերտ շփումների բացակայություն ևն)⁹⁶: Գ. Գոգիելու և Գ. Սանիկիժեի միտքն է զարգացնում նաև ազգային անվտանգության հարցերի փորձագետ, անվտանգության գնդապետ Բենիկ

⁹² «ՆՅՋԸ ԺԵԾԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 190, 2006.

⁹³ Չավախբի հասարակական-քաղաքական կազմակերպությունների՝ տվյալ շրջանում ներկայացրած մի շարք պահանջներին (հայերենին իրավական կարգավիճակի շնորհում, Չավախբում հայ-վրացական պետական բուհի հիմնում և այլն) անդրադարձել և դրանք հակապետական, անջատողական է որակել «Ախալի թառբա» թերթն իր մի քանի անդրադարձներում (տե՛ս «ՆՅՋԸ ԺԵԾԾ» («Ախալի թառբա» («Նոր սերունդ»)), N 63, N 76, 2006):

⁹⁴ Վրաստանի ոչ վրացաբնակ շրջաններում (Սամցխե-Չավախբ, Զվեմո Զարթի) և մայրաքաղաքի հայկական դպրոցներում վրացերենի ուսուցման անհրաժեշտությանը և այդ ուղղությամբ իրականացվող պետական մի շարք ծրագրերին է անդրադառնում «Մեոթխե» թերթի հրապարակագիր Նաթիա Մարուսիժեն (տե՛ս «Ձյոթոնջ» («Մեոթխե» («Չորրորդ»)), N 5, 2006). Ըստ «Ալիա» թերթի տեղեկությունների՝ 2006 թ. դրությամբ Վրաստանում գործել է 456 ոչ վրացական դպրոց, որոնց 70 %-ը գտնվել են Սամցխե-Չավախբ և Զվեմո Զարթի նահանգներում (տե՛ս «ՆՅՋԸ» («Ալիա» («Վերադարձ»)), N 19, 2006)

⁹⁵ «ՏԻՏԻ» («Ախի» («Արշալույս»)), N 11, 2006.

⁹⁶ «Ձյոթոնջ» («Մեոթխե» («Չորրորդ»)), N 10, 2006.

Ալադաշվիլին: «Ղվելա սիախլե» թերթի էջերում ևա լայն անդրադարձ է կատարում Ռուսաստանի նվաճողական քաղաքականությանը, Ցարական Ռուսաստանի՝ այսրկովկասյան նահանգներում հայության վերաբնակեցման գործընթացներին և Նշում, որ 18-րդ դարի վերջերից սկիզբ առած այդ գործընթացը հայերի համար հավասարազոր էր ֆիզիկական փրկության և բերրի հողերում բնակություն հաստատելուն: Բ. Ալադաշվիլին քննախույզ հայացք է նետում ՀՀ-ՌԴ և ՀՀ-Վրաստան ներկա հարաբերություններին՝ եզրակացնելով, որ հայկական կողմը, գործի դնելով հատուկ ծառայությունների իր ողջ ներուժը և լայնորեն համագործակցելով ռուսական ուժային մարմինների հետ, մշտապես գործել և գործում է ընդդեմ Վրաստանի շահերի⁹⁷:

Ձավախահայության՝ հայերենին իրավական կարգավիճակ տալու պահանջներն անհիմն է համարել ևաև հայտնի իրավաբան Վախթանգ Խմալաձեն: Ըստ նրա՝ Վրաստանում միակ պետական լեզուն վրացերենն է, Աբխազիայում ևաև աբխազերենը: Նոր օրենսդրական նախաձեռնության համար հարկավոր է կամ մեկ պատգամավորի, կամ 30.000 քաղաքացիների ստորագրությամբ դիմումը, իսկ Խորհրդարանում նման օրենքի ընդունման համար հարկավոր է կամ պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելի, կամ 200.000 քաղաքացիների ստորագրությունը: Իրավաբան Վ. Խմալաձեն բոլոր տարբերակները համարել է անիրատեսական⁹⁸: Ձավախքում երկլեզվյա (հայերեն, վրացերեն) վարչարարություն իրականացնելուն, այն է՝ հայերենին իրավական կարգավիճակ տրամադրելուն դեմ է հանդես եկել Կովկասի հարցերով փորձագետ, քաղաքագետ Մամուկա Արեշիձեն՝ Ձավախքը համեմատելով, օրինակ, ՌԴ Արմավիր և Նոր Նախիջևան հայահոծ շրջանների հետ⁹⁹: Որպես Ձավախքի խնդրի լուծում՝ քաղաքագետն առաջարկում է դատարկել Ախալքալաքում տեղակայված ռուսական ռազմակայանը (ևաև ՌԴ հատուկ ծառայությունների միջամտությունը բացառելու համար)¹⁰⁰, իրագործել Կարս-Ախալքալաք երկաթգծային նախագիծը և մշակել բախման գոտիներին հատուկ պետական ծրագիր:

2006 թ.-ի մարտի 9-ին Ձավախքի՝ գերազանցապես հայաբնակ Ծալկայի շրջանում վերաբնակ աջարների (որոշ տվյալներով՝ սվանների) և հայերի միջև տեղի ունեցած բախման հետևանքով Ղուշչի գյուղի 23-ամյա Գևորգ Գևորգյանի սպանությամբ պայմանավորված՝ հայության զագվածային հուզումները լայնորեն շահարկվեցին վրաց հասարակական-քաղաքական շրջանակներում: Ձավախահայության արդարացի պահանջները վրաց մամուլում ներկայացվեցին կրկին որպես անջատողականների, զինված քրեական խմբավորումների իրահրումներ և այլն: «Արգումենտի» թերթի հոդվածագիր Ջաբա Կվիրիկաշվիլին այդ առիթով առավել ծայրահեղացրել է իրադրությունը և Նշել, որ Վրաստանի իրավասությունները պարզապես չեն տարածվում Ձավախքում¹⁰¹:

Ձավախքին ինքնավարություն տրամադրելու անթույլատրելիության, հայերի՝ Վրաստանի հայկական եկեղեցիների հանդեպ պահանջների և Ձավախքի հանդեպ հավակնությունների, Վրաստանի աստիճանական մասնատման մասին խոսել է ևաև հայտնի գրող Ռևազ Միշվելաձեն: Չնայած իր խոստովանությամբ՝ հայ գործընկերների հետ ջերմ հարաբերություններին, գրողը, այդուհանդերձ, հայության մասին խոսելիս

⁹⁷ “ყველა სიახლე” («Ղվելա սիախլե» («Ամեն նորություն»)), N 34, 2009.

⁹⁸ “რეზონანსი” («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 76, 2006.

⁹⁹ “ახალი აზრი” («Ախալի ազրի» («Նոր կարծիք»)), N 11, 2006.

¹⁰⁰ Ախալքալաքից ռուսական ռազմաբազայի դուրս բերման հետևանքներին ու որոշ ազդեցություններին է անդրադարձել «Կվիրիս պալիտրան» (“კვირის პალიტრა” («Կվիրիս պալիտրա» («Շաբաթվա ներկայակեր»))), N 52, 2006.

¹⁰¹ Ըստ հրապարակագրի՝ Ախալքալաքն ու Ծալկան անկախ շրջաններ են և մեծ կապեր ունեն ավելի շատ ՀՀ-ի, քան Վրաստանի հետ (“არგუმენტი” («Արգումենտի» («Արգումենտ»))), N 10, 2006).

հետևում է վրաց հասարակական-քաղաքական շրջանակներում կարծրացած վատ ավանդույթներին¹⁰²:

ՀՀ պաշտպանության նախարարի՝ երկրի նախագահին ներկայացրած զեկույցում Կրաստանի և ջավախահայության մասին տեղ գտած դրույթները մեկնաբանելիս քաղաքագետներ Սոսո Ցինցաձեն և Ռամազ Սաքվարելիձեն հակադրվում են այն տեսակետին, թե ջավախահայության հասարակական դերի նվազումը ներկայացնում է իրական վտանգ, իսկ Կրաստանում առկա ազգային անհանդուրժողականությունը դառնում է ջավախահայության արտագաղթի պատճառ: Քաղաքագետները Կրաստանում չեն տեսնում հակահայ տրամադրություններ, իսկ Ջավախքում, ըստ նրանց, առկա է սոցիալական ծանր դրություն, ինչպես Կրաստանի մյուս նահանգներում: «Եթե Կրաստանում լինեք ազգային անհանդուրժողականություն, ապա այսօր Կրաստանում հայեր չէին լինի», - նշում է Ռ. Սաքվարելիձեն՝ չմատնանշելով և չհիշատակելով ջավախահայության կողմից բարձրացված բազմաթիվ ազգային-քաղաքական հիմնահարցերը և կրկին փաստելով, որ Ջավախքում առկա սոցիալական խնդիրները չեն առաջացրել ազգային խնդիրներ¹⁰³: Որպես ջավախահայության՝ ինքնավարության պահանջների չեզոքացման կարևոր պայման՝ «Խիխանի-Ուլբա» ոչկառավարական կազմակերպության նախագահ Սիմոն Շարաձեն առաջարկում է հրատապ կարգով իրականացնել Աջարիայի և Սվանեթիայի տարերային աղետներից տուժածների վերաբնակեցում Ջավախքում¹⁰⁴:

2009թ.-ի սեպտեմբերի 1-ին ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի և արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական ծառայությունների ղեկավարների հետ ամենամյա հանդիպման ժամանակ ՀՀ նախագահ Ս.Սարգսյանը, անդրադառնալով Ջավախքի հիմնախնդրին, նշեց. «Ջավախքի նկատմամբ մեր վարած քաղաքականության տրամաբանությունը բովանդակային առումով պետք է բխի «Ինտեգրում առանց ծուլման» սկզբունքից: Ինտեգրումը այս դեպքում պետք է ենթադրի վիրահայերի՝ Կրաստանի արժանապատիվ, կարող, հարգված քաղաքացիների համբավի ամրագրումը: Կարծում եմ, որ հայերենը Կրաստանում մարզային լեզու ճանաչելու (ընդգծումը մերն է՝ Վ.Ս.) Հայ Առաքելական սուրբ եկեղեցու գրանցումն ապահովելու, Կրաստանի՝ հայկական հուշարձանների պահպանմանն ուղղված քայլերը Կրաստանում միայն նպաստելու են հայ-վրացական բարեկամության ամրապնդմանը, փոխվստահության մթնոլորտի խորացմանը: Այս բոլոր հարցերում մենք պետք է լինենք նրբանկատ, բայց հետևողական և սկզբունքային»¹⁰⁵: Ջավախահայությունը, բնականաբար, ողջունեց նախագահ Սարգսյանի այս քայլը, վրացական մամուլը և հասարակական-քաղաքական միտքը, ընդհակառակը, հուժկու քննադատության ենթարկեցին այն: Քանի որ վրացական մամուլում հայերենին իրավական կարգավիճակի տրամադրման խնդրի քննարկմանը համապարփակ կերպով անդրադարձել ենք մեր նախորդ աշխատանքներից մեկում¹⁰⁶, ապա այստեղ նշված խնդիրը կքննարկենք Ջավախքի հիմնահարցի շրջանակներում: ՀՀ նախագահի վերոհիշյալ աննախադեպ հայտարարությունը հիմք ծառայեց, որ վրաց հասարակական-քաղաքական միտքը և՛ ՀՀ-ին, և՛ ջավախահայությանը հիշի ավելի հուժկու քննադատությունների, երբեմն նաև ծաղրավիրավորական արտահայտությունների

¹⁰² «Պժողովները» («Թբիլիսիցի» («Թբիլիսցիներ»)), N 12, 2006.

¹⁰³ «Պժողովներ» («Ռեզոնանս» («Ռեզոնանս»)), N 62, 2006.

¹⁰⁴ Տվյալ պարագայում նա խոսում է Ճակայի և վերջինիս հարևան Թեթրիծղարոյի շրջաններում իրականացվող վերաբնակեցման ծրագրերի կարևորության մասին («Նաջո տաոժ» («Ախալի թառքա» («Նոր սերունդ»)), N 41, 2007):

¹⁰⁵ «Հայաստանի Հանրապետություն», N 168, 2009:

¹⁰⁶ Սարգսյան Վ., Հայերենին կարգավիճակի տրամադրման խնդրի քննարկումը վրացական մամուլում, «21-րդ դար», N 5, Երևան, 2018, էջ 68-81:

միջոցով: Սամցխե-Ջավախքն անվիճելիորեն մտում է հնարավոր բախման գոտի՝ պատմաբան – հրապարակագիր Գերոզի Ուծիլաուրու որակումն է այդ առիթով¹⁰⁷: Սուր քննադատությամբ հանդես եկան և Ս. Սարգսյանի պահանջները անհիմն ու անհեթեթ համարեցին կամ Ջավախքում անկայունացման վտանգներ տեսան նաև քաղաքագետ Մամուկա Արեշիձեն¹⁰⁸, հրապարակագիր Մամուկա Վաշակիձեն (Ս. Սարգսյանի պահանջները համարելով «դաշնակցական նկրտումներ»)՝ հիշեցնում է հայերի՝ «Վրաստանում հյուր լինելու» և վերջիններիս «դավաճանական» պահվածքի, աբխազահայերից կազմված Մ. Բաղրամյան գումարտակի և այլնի մասին¹⁰⁹, փորձագետ Գիա Խուխաշվիլին¹¹⁰, քաղաքագետ-հրապարակագիր Գերոզի Գիգաուրին (Սերժ Սարգսյանի հիշյալ հայտարարություն-պահանջները համարել է Միխեիլ Սահակաշվիլու՝ 2009 թ.-ի հունիսին Երևանում ստացած Պատվո շքանշանի և ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչման (իր որակմամբ՝ կաշառքի), արդյունք)¹¹¹, հայագետ Բոնդո Արվելաձեն (համարում է, որ ՀՀ նախագահի պահանջը եղել է Վ. Պուտինի թելադրանքով, և որին հետևելու են Ջավախքի ինքնավարության, ապա ՀՀ-ի հետ միավորման պահանջները)¹¹², քաղաքագետ Սոսո Ֆինցաձեն (ըստ նրա՝ ՀՀ-Թուրքիա հարաբերությունների կարգավորման պատրանքներով տարվելով՝ ՀՀ-ն անմիտ քաղաքականություն է վարում Վրաստանի հանդեպ)¹¹³, Լեյբորիստների կուսակցության առաջնորդ Շավլա Նաթելաշվիլին (կոչ է անում Սերժ Սարգսյանին՝ դիմել այն բոլոր երկրներին, որտեղ կան հայկական համայնքներ՝ պահանջելով նույնը)¹¹⁴:

Եզրակացություն

Վրաց հասարակական-քաղաքական միտքը հիմնականում և գերակշիռ մասով մերժել է Ջավախքի հիմնահարցի գոյությունը, բացասաբար է վերաբերվել բոլոր այն կազմակերպությունների, գործիչների գոյությանն ու գործունեությանը, որոնք այս կամ այն կերպ արժարծել են Ջավախքի հիմնահարցը: Ներկայիս Վրաստանի տարածքում բնակվող տեղաբնիկ ժողովուրդը հանդիսացող, միևնույն ժամանակ որպես ազգային փոքրամասնություն հանդես եկող ջավախահայության պահանջները, որոնք համապատասխանում են միջազգային իրավունքի տառին ու ոգուն, վրաց հասարակական-քաղաքական միտքը որակել է անջատողականության դրսևորում, ՀՀ-ի

¹⁰⁷ “Նեալո տառն” («Ախալի թառա» («Նոր սերունդ»), N 233, 2009.

¹⁰⁸ “Րեթոնանս” («Ռեզոնանսի» («Ռեզոնանս»)), N 186, 2009. Վերլուծելով տարածաշրջանային իրողությունները՝ Մ. Արեշիձեն Ս. Սարգսյանի պահանջները համարել է ՌԴ-ի նշման պատճառով իրականացված քայլ (տե՛ս “Երոզի Բալիցի” («Կվիրիս պալիտրա» («Շաբարթվա ներկայակակը»)), N 31, 2009).

¹⁰⁹ “Նաթարտեղոս Րեթաթեկա” («Սաբարթելու ռեսպուբլիկա» («Վրաստանի Հանրապետություն»)), N 175, 2009.

¹¹⁰ “Նեալո տառն” («Ախալի թառա» («Նոր սերունդ»), N 238, 2009.

¹¹¹ “Նեալո-ճաթալո” («Սաթալ-դասաթալի» («Վերելք-վայրէջք»)), N 36, 2009. Գ. Գիգաուրու՝ Նույն թեմայով հարցազրույցը տե՛ս “Նեալո-ճաթալո” («Սաթալ-դասաթալի» («Վերելք-վայրէջք»)), N 39, 2009.

¹¹² “Նաթարտեղոս Րեթաթեկա” («Սաբարթելու ռեսպուբլիկա» («Վրաստանի Հանրապետություն»)), N 179, 2009.

¹¹³ “Ջորճիան տաթն” («Ջորճիան թայն»), N 31, 2009. Նույն առիթով տրված իր մեկ այլ հարցազրույցում ևս դատապարտելով ՀՀ նախագահի վերոհիշյալ պահանջը՝ Սոսո Ֆինցաձեն լայնորեն քննարկում է Ջավախքի շուրջ ստեղծված իրողությունը՝ հայկական կողմի բոլոր պահանջները համարելով արկածախնդրություն, Ջավախքի անեթախ, ՌԴ-ի օգնությամբ Վրաստանի քայքայմանն ուղղված գործողություններ և այլն (տե՛ս “Նաթարտեղոս Րեթաթեկա” («Սաբարթելու ռեսպուբլիկա» («Վրաստանի Հանրապետություն»)), N 188, 2009):

¹¹⁴ “Ջորճիան տաթն” («Ջորճիան թայն»), N 31, 2009.

և ՌԴ-ի կողմից ուղղորդվող սադրանք՝ ուղղված Վրաստանի տարածքային ամբողջականության դեմ:

Ինչպես Չավախբում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունների, անհատ գործիչների, այնպես էլ ՀՀ իշխանությունների և հասարակական-քաղաքական շրջանակների՝ Չավախբի հիմնահարցի վերաբերյալ գրեթե բոլոր մտահոգությունները, քննարկումներն ու առաջարկությունները վրաց հասարակական-քաղաքական միտքը որակել է որպես Վրաստանի տարածքային ամբողջականության ու պետական շահերի դեմ ուղղված քայլեր:

Չավախբի հիմնահարցի ցանկացած արձարձում, քննարկում կամ լուծման առաջարկ վրաց հասարակական-քաղաքական շրջանակները համարել են Հայաստանի Հանրապետության կամ Ռուսաստանի Դաշնության կողմից նախագծված և իրականացվող սադրանք՝ ուղղված Վրաստանի պետական շահերի դեմ:

Վրաց հասարակական-քաղաքական միտքը հիմնականում դեմ է հանդես եկել թուրք-մետսեթեցիներին Չավախբի տարբեր շրջաններում վերաբնակեցնելու գաղափարին, ծրագրերին ու գործընթացին՝ հստակ նշելով, որ վերաբնակեցումը էթնիկ բախումների տեղիք կտա Չավախբում:

Վրաց հասարակական-քաղաքական միտքը հիմնականում ողջունել է թուրք-ադրբեջանական տարանցիկ ուղիների՝ Վրաստանի տարածքով անցնելու գործընթացը: Վրացական շրջանակները քննարկել են ՀՀ-ի՝ նշյալ նախագծերին մասնակցելու հարցը, այդուհանդերձ հաշվի առնելով ՀՀ-Թուրքիա և ՀՀ-Ադրբեջան լարված հարաբերությունները՝ ՀՀ-ի մասնակցությունը տարածաշրջանային «հորիզոնական» նախագծերին համարել են անիրատեսական: Վրաց հասարակական-քաղաքական միտքը ՀՀ-ի՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ հարաբերությունների լարված լինելու պատճառ է համարել ոչ թե Թուրքիայի և Ադրբեջանի ցեղասպան վարքագիծը, այլ ՀՀ-ի ռուսամետ քաղաքականությունը և Ռուսաստանի շահերի առկայությունը Այսրկովկասում:

THE MAIN PROBLEM OF JAVAKHK IN THE PERCEPTION OF GEORGIAN SOCIO-POLITICAL THOUGHT (BASED ON GEORGIAN PRINT MEDIA IN 1999-2009) (PART 2)

VAHE SARKISYAN

*National Academy of Sciences of the Republic of Armenia,
Institute of History, Department of Diaspora and History of Armenian Colonies,
Researcher, Ph.D. in Historical Sciences,
Yerevan, Republic of Armenia*

The purpose of the article is to present the Javakhk problem in the Georgian print media for about ten years (1999-2009) with an understanding of Georgian socio-political thought. The purpose of the first part of the article was to systematically show, indicate all internal and external factors that influenced the Georgian side's perception of the Javakhka question. The second (this) part of the article presents the main publications of the Georgian print media, which indicate the Georgian perception of the Javakhk problem. The corresponding conclusions are also placed at the end. The text of the study was written in 1999-2009. Based on a "special" study of other "materials" published in the Georgian print media, as well as other related materials. As a result of the study, we came to the conclusion that the Georgian socio-political thought largely rejected the existence of the Javakhk issue, negatively related to the existence and activities of all organizations

and figures who in one way or another raised the Javakhk issue. The demands of the Armenians of Javakhka, who are indigenous people living in the territory of present-day Georgia and at the same time a national minority, consistent with the letter and spirit of international law, were described by Georgian socio-political thought as being outside separatism. Against the territorial integrity of Georgia.

Key words: *Javakhk problem, Georgian socio-political thought, Georgian print media, Georgian environment, transit routes, perception, Russia, Turkey, Republic of Armenia.*

**ПРОБЛЕМА ДЖАВАХКА В ВОСПРИЯТИИ ГРУЗИНСКОЙ
ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ
(ПО МАТЕРИАЛАМ ГРУЗИНСКИХ ПЕЧАТНЫХ ИЗДАНИЙ 1999-2009 гг.)
(ЧАСТЬ 2)**

ՎԱՅ ՏԱՐԿԻՍՅԱՆ

*научный сотрудник отдела истории диаспоры и
армянских колоний Института истории НАН РА,
кандидат исторических наук,
г. Ереван, Республика Армения*

Цель статьи - на основе материалов грузинских печатных изданий отдельно взятого десятилетия (1999-2009 гг.) представить восприятие проблемы Джавахка грузинской общественно-политической мыслью. Первая часть статьи решала задачу систематизированного выявления и представления всех внутренних и внешних факторов, влияющих на восприятие проблемы Джавахка грузинской стороной. В данной, второй части работы, представлены основные публикации грузинской прессы, выявляющие грузинское восприятие проблемы Джавахка. В конце статьи представлены соответствующие выводы.

Текст исследования был составлен вследствие как отдельного изучения, так и сопоставления грузинских печатных изданий, опубликованных 1999-2009 гг., а также других источников, связанных с данной темой.

В результате исследования мы пришли к выводу о том, что грузинская общественно-политическая мысль в большинстве случаев отрицала существование проблемы Джавахка, формировала отрицательное отношение к тем организациям и деятелям, которые так или иначе поднимали проблему Джавахка. Требования армян Джавахка, являющихся коренным народом, проживающим на территории современной Грузии и позиционирующим себя как национальное меньшинство, соответствуют букве и духу международного права, но грузинская общественно-политическая мысль квалифицирует эти требования как проявление сепаратизма, провокацию, инициированную Республикой Армения и Российской Федерацией и направленную против территориальной целостности Грузии.

Ключевые слова: *проблема Джавахка, грузинская общественно-политическая мысль, грузинские печатные издания, грузинская среда, восприятия, переселение, транзитные пути, Россия, Турция, Республика Армения.*